

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 104/2000 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ձկնամթերքի և ակվակուլտուրայի մթերքի շուկաների ընդհանուր

կազմակերպման մասին

(ՊՏ L 017, 21.01.2000թ., էջ 22)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

Փոփոխված՝

A1

L 236 33 23.9.2003

Զեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների վերաբերյալ ակտով և այն պայմանագրերի լրամշակումներով, որոնց վրա հիմնված է Եվրոպական միությունը

23.09.2003թ.

"B

ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 104/2000 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**Ձկնամթերքի և ակվակուլտուրայի մթերքների շուկաների ընդհանուր
կազմակերպման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 26–րդ, 36–րդ և 37–րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (4),

Քանի որ

1) ձկնամթերքի շուկայի կազմակերպմանը վերաբերող հիմնական դրույթները պետք է վերանայվեն՝ հաշվի առնելու համար շուկայի զարգացումները, վերջին տարիներին ձկնորսական գործունեության փոփոխությունները և ներկայումս գործող կանոնների իրականացման ընթացքում հայտնաբերված թերությունները. նշված դրույթները, իրականացվելիք մի շարք փոփոխությունների և դրանց բարդության պատճառով, ցանկացած կանոնի համար անհրաժեշտ հստակություն չեն ունենա, քանի դեռ դրանք ամբողջությամբ չեն վերամշակվել. «Ձկնամթերքի և ակվակուլտուրայի մթերքների շուկայի ընդհանուր կազմակերպման մասին» Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17–ի թիվ 3759/92 (ԵՀ) կանոնակարգը (5) պետք է, հետևաբար, փոխարինվի նոր կանոնակարգով,

2) կանոնները պարզեցնելու և դրանց կիրառումն այն անձանց կողմից դյուրացնելու

համար, որոնց համար դրանք նախատեսված են, նոր կանոնակարգը պետք է նաև ներառի պատշաճ կերպով թարմացված և լրամշակված՝ «Ձկնարդյունաբերության ոլորտում արտադրողների կազմակերպությունների հավատարմագրման մասին» Խորհրդի 1976 թվականի հունվարի 19-ի թիվ 105/76 (ԵՏՀ) կանոնակարգի (6) և Ձկնաբուծության ոլորտում արտադրողների կազմակերպությունների կողմից ընդունված որոշ կանոնների կիրառմանը վերաբերող ընդհանուր կանոնները սահմանող՝ Խորհրդի 1982 թվականի հունիսի 29-ի թիվ 1772/82 (ԵՀՏ) կանոնակարգի հիմնական դրույթներ. նշված կանոնակարգերը պետք է, հետևաբար, չեղյալ ճանաչվեն,

3) ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունը պետք է ներառի, մասնավորապես, գյուղատնտեսական շուկաների ընդհանուր կազմակերպումը, որը կարող է, ելնելով համապատասխան մթերքներից, իրականացվել տարբեր ձևերով,

4) ձկնարդյունաբերությունը հատուկ կարևորություն ունի Համայնքի որոշ ափամերձ շրջանների տնտեսության համար. ձկնարդյունաբերությունը նշված շրջաններում ձկնորսների եկամտի հիմնական աղբյուրն է. ուստի, շուկայի կայունությունը պետք է խթանվի համապատասխան միջոցներով, որոնք իրականացվում են Համայնքի միջազգային պարտավորություններին համապատասխան, մասնավորապես հաշվի առնելով ներքին արտադրության օժանդակման մեխանիզմների և մաքսերի համաձայնագրերի մասին Առևտրի համաշխարհային կազմակերպության դրույթները,

5) ձկնամթերքի արտադրության և շուկայահանման ժամանակ պետք է հաշվի առնվի կայուն ձկնորսությանն օժանդակելու անհրաժեշտությունը. նշված մթերքների շուկաների ընդհանուր կազմակերպումը պետք է, հետևաբար, իրականացվի այնպիսի միջոցներով, որոնք կապահովեն առաջարկի ու պահանջարկի միջև հավասարակշռությունը որակի ու քանակի առումով և կմեծացնեն մթերքներից ստացվող շահույթը թե՛ նշված նպատակի, և թե՛ արտադրողների եկամուտներն

ավելացնելու համար՝ ապահովելով շուկայական գների կայունությունը,

6) շուկաների ընդհանուր կազմակերպումն իրականացնելու եղանակներից մեկը համապատասխան մթերքների նկատմամբ շուկայահանման ընդհանուր չափանիշներ կիրառելն է. նշված չափանիշների կիրառման դեպքում հնարավոր է բացառել ոչ պատշաճ որակի մթերքների՝ շուկա դուրսբերումը և դյուրացնել բարեխիղճ մրցակցության վրա հիմնված առևտուրը՝ այսպիսով օգնելով բարելավելու արտադրության շահութաբերությունը,

7) նշված չափանիշների կիրառման դեպքում նախատեսվում է ստուգել այն մթերքները, որոնց համար դրանք սահմանվել են. հետևաբար, նշված ստուգումների համար անհրաժեշտ է դրույթ սահմանել,

8) սպառողներին մատակարարվում է, մասնավորապես, թարմ և պաղեցված ձկնամթերքի լայն տեսականի և դրա համար անհրաժեշտ է նրանց տրամադրել մթերքների հիմնական հատկությունների մասին նվազագույն տեղեկություններ, ապա անդամ պետությունների պատասխանատվությունն այս նպատակով իրենց տարածքում համապատասխան մթերքների վաճառքի համար օգտագործվող ընդունված անվանումների ցանկն ընդունելն է,

9) արտադրողների կազմակերպությունները ընդհանուր շուկայի կազմակերպման հիմքն են, որոնք պետք է ապահովեն իրենց գործունեության ապակենտրոնացվածությունը կազմակերպությունների մակարդակում. չնայած այն փաստին, որ առկա է պահանջարկի աննախադեպ կենտրոնացում, այնուամենայնիվ, առաջարկի կենտրոնացումը նշված կազմակերպությունների միջոցով ավելի քան տնտեսական անհրաժեշտություն է՝ շուկայում արտադրողների դիրքն ամրապնդելու նպատակով. նշված կենտրոնացումը պետք է լինի կամավոր և նշանակալից՝ արտադրողների կազմակերպությունների կողմից իրենց անդամներին առաջարկվող

ծառայությունների շրջանակի և արդյունավետության առումով. անհրաժեշտ է սահմանել անդամ պետության կողմից արտադրողների կազմակերպությանը հավատարմագրվելու ընդհանուր չափորոշիչներ. անդամ պետությունը չպետք է հավատարմագրի արտադրողների կազմակերպություններին՝ որպես ընդհանուր շուկայի կազմակերպման նպատակների իրականացմանը նպաստող կազմակերպություններ, քանի դեռ դրա կանոնադրությամբ իր և իր անդամների վրա որոշ պարտավորություններ չեն դրվել,

10) արտադրողների կազմակերպությունների՝ ձկնամթերքի որակը բարելավելու նախաձեռնությունները պետք է խթանել համապատասխան կազմակերպություններին հավատարմագրելու միջոցով՝ որոշ պայմանների պահպանմամբ,

11) արտադրողների կազմակերպությունների գործունեությանն օժանդակելու և շուկայի առավել մեծ կայունության ապահովման գործընթացը դյուրացնելու նպատակով անդամ պետություններին պետք է թույլ տրվի կազմակերպության կողմից իր անդամների անունից ընդունված կանոնները տարածել շրջանում, մասնավորապես, արտադրության և շուկայահանման, այդ թվում՝ միջամտության վերաբերյալ կանոնները՝ որոշ պայմաններով, բոլոր ոչ անդամների վրա, որոնք տվյալ շրջանում ապրանքներ են շուկայահանում. նշված ընթացակարգը պետք է ստուգվի Համայնքի կողմից, որի կիրառման դեպքում, նշված կանոնները կարող են որոշ հանգամանքներում առոչինչ լինել,

12) նշված համակարգի կիրառման ծախսերը պետք է կրի այն կազմակերպությունը, որի ընդունած կանոններն են տարածվել. հետևաբար, ոչ անդամները պետք է ներդրումներ կատարեն՝ ծածկելու համար նշված ծախսերը. անդամ պետություններին պետք է թույլ տրվի նաև նախատեսել փոխհատուցման տրամադրում այն օպերատորներին, որոնց ապրանքները, թեև համապատասխանում են շուկայահանման չափանիշներին, սակայն չեն կարող

շուկայահանվեն և հանվել են շուկայից,

13) ամեն դեպքում պետք է սահմանվեն դրույթներ՝ ապահովելու համար, որ արտադրողների կազմակերպությունները Համայնքում գերիշխող դիրք չգրադեցնեն,

14) ռեսուրսների ռացիոնալ և կայուն զարգացում ապահովելու նպատակով արտադրողների կազմակերպությունները պետք է խրախուսեն իրենց անդամներին՝ արտադրելու շուկայի պահանջներին համապատասխանող արտադրանք, և ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն, որ իրենց անդամներն ստանան ամենաբարձր շահույթ, մասնավորապես, քանակական սահմանափակումների ենթակա ձկնատեսակների ձկնորսությունից. այս պատճառով ցանկալի է պահանջել արտադրողների կազմակերպություններից սահմանել և յուրաքանչյուր ձկնորսական տարվա սկզբում իրավասու մարմիններ առաջարկը պլանավորելու ծրագիր ներկայացնել և նախօրոք կարգավորել իրենց անդամների մատակարարումները և, հարկ եղած դեպքում, կոնկրետ դրույթներն այն մթերքների համար, որոնք, սովորաբար, շուկայահանման դժվարություններ են առաջացնում,

15) հաշվի առնելով արտադրողների կազմակերպությունների՝ նշված պարտավորությունները կատարելու հետ կապված ծախսերը, արդարացի է նշված կազմակերպություններին սահմանափակ ժամկետով համապատասխան չափով փոխհատուցում տրամադրել,

16) անդամ պետություններին պետք է հնարավորություն ընձեռնվի լրացուցիչ օգնություն տրամադրելու արտադրողների կազմակերպություններին՝ գործունեության ծրագրերի շրջանակներում «Ձկնորսության ոլորտում Համայնքի կառուցվածքային աջակցությանը վերաբերող մանրամասն կանոնները և միջոցառումները սահմանող»՝ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2792/1999 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան (8),

17) միջճյուղային կազմակերպությունները, որոնք ստեղծվել են այն անհատների կամ օպերատորների գործող խմբերի նախաձեռնությամբ, որտեղ դրանք կազմում են ձկնամթերքի ոլորտում տարբեր գործունեություն իրականացնող անդամների մեծ մասը, կարող են օգնել առավել մանրամասն հաշվի առնելու շուկայում տիրող իրավիճակները և դյուրացնելու գործնական մոտեցման կիրառումը, որը կբարելավի հաշվետվությունները ներկայացնելը, ինչպես նաև արտադրության կազմակերպումը, արտադրանքը ներկայացնելը և շուկայահանումը. քանի որ նշված կազմակերպությունների աշխատանքը կարող է, ընդհանուր առմամբ, նպաստել Պայմանագրի 33-րդ հոդվածի և, մասնավորապես, սույն Կանոնակարգի նպատակների իրականացմանը, ապա նպատակահարմար է, գործողությունների համապատասխան ձևերը սահմանված լինելու դեպքում, հավատարմագրում շնորհվի այն կազմակերպություններին, որոնք գործնական քայլեր են կատարում՝ նշված նպատակներն իրականացնելու համար. անհրաժեշտ է, որոշ պայմանների պահպանմամբ, դրույթ նախատեսել՝ միջճյուղային կազմակերպությունների կողմից ընդունված կանոնների կիրառման, ինչպես նաև դրանց կիրառումից բխող ծախսերը համատեղ կատարելու նպատակով. այս ընթացակարգը պետք է ստուգվի Հանձնաժողովի կողմից, որի կիրառման դեպքում նշված կանոնները, որոշ հանգամանքներում, կարող են առոչինչ հայտարարվել,

18) անհրաժեշտ է նախանշել այն պայմանները, որոնց դեպքում Խորհրդի թիվ 26 կանոնակարգի (___9___) 1-ին հոդվածը չի կիրառվում միջճյուղային կազմակերպությունների համաձայնությունների, որոշումների ու համաձայնեցված գործողությունների նկատմամբ,

19) որպեսզի կարգավորվի շուկայում տիրող իրավիճակները, որոնք արտադրողների եկամտի աղբյուր հանդիսացող որոշ ձկնամթերքների դեպքում, հավանական է, որ կհանգեցնեն Համայնքի շուկայի խաթարումներին հանգեցնող գների, ապա անհրաժեշտ է յուրաքանչյուր ձկնորսական տարվա համար, վերջին տեխնիկական

տվյալների հիման վրա, սահմանել կողմնորոշիչ գին կամ, թյուննոսի դեպքում, Համայնքում արտադրողների գին, որը ներկայացուցչական է Համայնքի արտադրատարածքների համար, և որը կօգտագործվի՝ որոշելու համար գների այն մակարդակը, որի դեպքում անհրաժեշտ է միջամտել. ի նկատի ունենալով այս հանգամանքը՝ պետք է սահմանել կողմնորոշիչ գին՝ արտացոլելու շուկայում տիրող իրավիճակը և ձկնորսական մի տարուց մյուս տարի չափազանց մեծ գների տատանումները կանխելու համար. կողմնորոշիչ գինն այն հիմնական գործոնն է, որի հիման վրա արտադրողների կազմակերպությունները միջամտում են. այս նպատակով Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի առաջարկի հիման վրա, պետք է միջոցներ ընդունի,

20) շուկայում գները կայունացնելու նպատակով արտադրողների կազմակերպությունները պետք է կարողանան միջամտել շուկայում՝ կիրառելով այնպիսի գներ, որոնցից ցածր գների դեպքում իրենց անդամների մթերքները դուրս են հանվում շուկայից,

21) նպատակահարմար է, որոշ դեպքերում և որոշ պայմանների ներքո, օժանդակել արտադրողների կազմակերպությունների գործունեությանը՝ տրամադրելով ֆինանսական փոխհատուցում արտադրանքի այն քանակությունների համար, որոնք պարտադիր դուրս են հանվել շուկայից,

22) այնուամենայնիվ, արտադրողների կազմակերպությունները պետք է միջամտեն միայն տեղական լրացուցիչ մատակարարումների դեպքում, երբ շուկան չի կարող դրանք կլանել, և որից հնարավոր չէ խուսափել տարբեր տեսակի միջոցների կիրառմամբ. ուստի, պետք է ֆինանսական փոխհատուցում տրվի արտադրության փոքր ծավալների համար,

23) խրախուսելու համար, որպեսզի ձկնորսներն իրենց մատակարարումներն առավել

հստակ հարմարեցնեն շուկայի պահանջներին, ապա անհրաժեշտ է նախատեսել ֆինանսական փոխհատուցման տարբեր մակարդակներ՝ ելնելով մթերքների՝ շուկայից դուրս հանելու ծավալի հետ,

24) սույն Կանոնակարգի համաձայն իրականացված բոլոր նոր միջոցների կիրառումը արտադրողների կազմակերպություններին հնարավորություն կտա զգալիորեն նվազեցնելու շուկայից մթերքների ամբողջությամբ դուրսհանումը. ուստի, հիմնավորված է այն քանակությունների կրճատումը, որոնց համար տրամադրվում է ֆինանսական փոխհատուցումը, ինչպես նաև փոխհատուցման մակարդակի աստիճանաբար կրճատումն անցումային ժամանակահատվածի ընթացքում.

25) եթե շուկան լրջորեն խաթարվել է, անհրաժեշտ է ընդունել համապատասխան միջոցներ՝ հարմարեցնելու համար շուկայից հանելու համար տրամադրված փոխհատուցումը կարգավորող պայմանները,

26) հաշվի առնելով որոշ ձկնատեսակների սակավությունը՝ պետք է հնարավորինս խուսափել շուկայից հանված ձուկը ոչնչացնելուց. այս նպատակով անհրաժեշտ է աջակցություն տրամադրել՝ շուկայից հանված թարմ մթերքների որոշ քանակությունների՝ մարդու կողմից սպառման համար մշակելու, կայունացնելու և պահելու համար. այս միջոցը պետք է կիրառվի բոլոր այն ձկնատեսակների նկատմամբ, որոնք հավանաբար դուրս կհանվեն շուկայից. արտադրողների կազմակերպությունները պետք է ավելի շատ տիրապետեն այս մեխանիզմին, որն իրենից ներկայացնում է ավելի շուտ թե՛ միջամտություն, և թե՛ ձկնամթերքից ստացված շահույթը մեծացնելու միջոց, քան շուկայից մթերքները դուրս հանելու մեխանիզմ. ուստի, անհրաժեշտ է ավելացնել այն քանակությունները, որի դեպքում կիրառվում է նշված մեխանիզմը,

27) որոշ ձկնատեսակների գներն ըստ շրջանների այնքան են տատանվում, որ նշված

տեսակները դեռևս չեն կարող ընդգրկվել արտադրողների կազմակերպություններին ֆինանսական փոխհատուցում տրամադրելու համակարգում. այնուամենայնիվ, համապատասխան մթերքների շուկայի առավել մեծ կայունություն խթանելու նպատակով, պատշաճ կերպով հաշվի առնելով մթերքների առանձնահատկությունները և դրանց արտադրությանն ու շուկայահանմանն առնչվող հանգամանքների բազմազանությունը, նշված մթերքները պետք է ընդգրկվեն դրանց կոնկրետ առանձնահատկություններին համապատասխանեցված՝ Համայնքի գների աջակցության համակարգում՝ հիմնվելով արտադրողների կազմակերպությունների կողմից առանձին սահմանված՝ շուկայից դուրսբերման գնի կիրառման և որոշ պայմաններով նշված կազմակերպություններին հաստատագրված դրույքաչափով աջակցության տրամադրման վրա այն մթերքների համար, որոնց մասով միջամտելու անհրաժեշտություն է առաջացել,

28) անհրաժեշտ է նավի վրա սառեցված որոշ մթերքների դեպքում նախատեսել աջակցության հատուկ սխեմա՝ որպես նշված մթերքների մասնավոր պահում, պահպանելով որոշ պայմաններ և սահմաններ՝ պայմանով, որ դրանք Համայնքի մակարդակով սահմանված գնից բարձր գնով չեն կարող շուկա հանվել,

29) պահածոների արդյունաբերության մեջ օգտագործվող թյուննուսի ներմուծման գների նվազումը կարող է բացասաբար անդրադառնալ Համայնքի՝ այս արտադրանքն արտադրողների եկամտի մակարդակների վրա. հետևաբար, եթե կա դրա անհրաժեշտությունը, պետք է փոխհատուցում տրամադրել այս արտադրանքն արտադրողներին. միասեռ արտադրանքի շուկայահանումն օպտիմալացնելու նպատակով նշված արտոնությունները որոշ պայմաններով պետք է տրվեն միայն արտադրողների կազմակերպություններին,

30) թյուննուսի արտադրության չափից ավելի ընդլայնումը, հետևաբար նաև հարակից ծախսերի ավելացումները թույլ չտալու նպատակով անհրաժեշտ է սահմանաչափեր նախատեսել, որոնց շրջանակներում արտադրողների կազմակերպություններին

արտոնություններ կտրամադրվի Համայնքի շուկայում գրանցված առաջարկի հիման վրա, և մեխանիզմի աշխատանքը խթանող չափորոշիչները պետք է վերանայվեն,

31) գնահատելու համար, թե արդյոք Համայնքի շուկայում տիրում է այն նույն գնային իրավիճակը, ինչ թյուննոսի համաշխարհային շուկայում տիրող գնային իրավիճակն է, որը երաշխավորում է արտոնությունների տրամադրում, ապա պետք է ստուգումներ կատարել՝ պարզելու համար, թե արդյոք Համայնքի շուկայական գների իջեցումները բխում են ներմուծման գների նվազումներից,

32) ընդհանուր մաքսատուրքի կիրառումը՝ թյուննոսից պատրաստված որոշ մթերքների դեպքում, ամբողջությամբ կասեցվում է. քանի որ թյուննոսի արտադրության ծավալները Համայնքում բավարար չեն, մատակարարման պայմանները, համեմատած արտահանող երրորդ երկրներում առկա մատակարարման պայմանների հետ, պետք է նշված մթերքներն օգտագործող սննդի արդյունաբերության համար բավարար լինեն՝ չխոչընդոտելու դրանց զարգացմանը մրցակցության միջազգային պայմանների համատեքստում. Համայնքում թյուննոս արտադրողներին այս համակարգի կիրառման արդյունքում ստեղծված ցանկացած անբարենպաստ պայմանի դեպքում կարող է փոխհատուցում տրամադրվել՝ վճարելով այս նպատակի համար նախատեսված փոխհատուցումը,

33) արդյունաբերության մշակող ճյուղերում օգտագործման համար նախատեսված հումքի՝ մրցակցային պայմաններով և բավարար չափով Համայնքի շուկա դուրսբերումն ապահովելու նպատակով ընդհանուր մաքսատուրքի կիրառումը որոշ մթերքների նկատմամբ պետք է ամբողջությամբ կամ մասամբ, անորոշ ժամկետով կասեցվի,

34) այնուամենայնիվ, նշված ռեժիմների համաձայն մաքսատուրքերի վճարման ժամկետի հետաձգումը չպետք է հանգեցնի երրորդ երկրներից չափազանց ցածր

գներով մթերքների ներմուծման. հետևաբար, մաքսատուրքերի վճարման ժամկետը հետաձգելու համար պետք է կիրառել վկայակոչման գինը, որը հաշվարկվում է սահմանվելիք կանոններին համապատասխան,

35) եթե ներմուծման կամ արտահանման ժամանակ ստեղծված բացառիկ հանգամանքները հանգեցնում են կամ սպառնում են հանգեցնել այնպիսի լուրջ խաթարումների, որոնք հավանաբար կվնասեն Պայմանագրի 33-րդ հոդվածով սահմանված նպատակների իրականացմանը, ապա անհրաժեշտ է երրորդ երկրների հետ առևտրում կիրառել համապատասխան միջոցներ՝ միևնույն ժամանակ կատարելով Համայնքի միջազգային պարտավորությունները,

36) փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ կլինի հնարավորինս արագ կերպով միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար Համայնքի շուկա մթերքների մատակարարումը և Համայնքի միջազգային պարտավորությունների կատարումը. Համայնքին բոլոր անհրաժեշտ միջոցներով նշված իրավիճակները կարգավորելու հնարավորություն տալու համար անհրաժեշտ է այնպիսի ընթացակարգ նախատեսել, որի համաձայն անհրաժեշտ միջոցներ կարող են արագ ձեռնարկվել,

37) աջակցության որոշ տեսակների տրամադրումը կվնասի գների ընդհանուր համակարգի վրա հիմնված միասնական շուկայի ստեղծմանը. ուստի, Պայմանագրի այն դրույթները, որոնց համաձայն անդամ պետությունները պետական աջակցություն են տրամադրում, կարող են ուսումնասիրվել, որի արդյունքում կարգելվեն այն սխեմաների կիրառումը, որոնք անհամատեղելի են ընդհանուր շուկայի հետ. նշված դրույթները պետք է կիրառվեն նաև ձկնարդյունաբերության նկատմամբ,

38) սույն Կանոնակարգն իրականացնելու համար Հանձնաժողովի ու անդամ պետությունների միջև անհրաժեշտ է տեղեկությունների փոխանցման համակարգեր

ստեղծել և պահպանել. նշված համակարգի ներդրման և պահպանման ծախսերը, որի մի մասը պետք է ծածկվի Համայնքի բյուջեի հաշվին, պետք է հստակեցվի,

39) սույն Կանոնակարգի կիրառումից բխող պարտավորությունների կատարման ժամանակ անդամ պետությունների կողմից կրած ծախսերը պետք է ֆինանսավորվեն՝ Համայնքի կողմից «Գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականության ֆինանսավորման մասին» Խորհրդի 1999 թվականի մայիսի 17-ի թիվ 1258/1999 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան (10),

40) շուկայի ընդհանուր կազմակերպման իրականացման ժամանակ պետք է նաև հաշվի առնվի այն փաստը, որ Համայնքը հետաքրքրված է պաշտպանել ձկնորսության շրջաններն այնքան, որքան դա հնարավոր է. ուստի, չպետք է թույլատրվի այն միջոցների ֆինանսավորումը, որոնք կարգավորում են անդամ պետություններին հատկացված ձկան քանակությունները գերազանցող քանակությունները,

41) սույն Կանոնակարգի հետ համապատասխանություն ապահովելու և ցանկացած խարդախություն կանխելու ու վերացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները պետք է ընդունեն անդամ պետությունները,

42) նշված դրույթների իրականացումը դյուրացնելու նպատակով անհրաժեշտ է ընթացակարգ ունենալ՝ Կառավարման կոմիտեում անդամ պետությունների և Հանձնաժողովի միջև սերտ համագործակցության համար,

43) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որով սահմանվում են Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը (11),

44) ձկնամթերքի շուկայի ընդհանուր կազմակերպման ժամանակ պետք է, միևնույն ժամանակ, համապատասխանաբար հաշվի առնվեն Պայմանագրի 33-րդ և 131-րդ հոդվածներով սահմանված նպատակները,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Սույնով հաստատվում է ձկնամթերքի շուկայի ընդհանուր կազմակերպումը, որը ներառում է գինը, առևտրի համակարգն ու մրցակցության ընդհանուր կանոնները:

Սույն Կանոնակարգի իմաստով՝

- «արտադրող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտագործելով արտադրական միջոցներ, ձկնամթերք է արտադրում՝ նպատակ ունենալով առաջին փուլում շուկայահանելու դրանք.
- «ձկնամթերքը»
- ներառում է ծովից կամ ներքին ջրուղիներից բռնված ձկնատեսակներից պատրաստված մթերք, ինչպես նաև ստորև նշված ակվակուլտուրայի մթերքը.

—

ՀԱ ծածկագիր		Ապրանքների նկարագիրը
ա)	0301	Կենդանի ձուկ
	0302	Ձուկ՝ թարմ կամ պաղեցրած՝ բացառությամբ 0304 ապրանքային դիրքի ձկան սուկիի և այլ ձկների մսի

	0303	Ձուկ՝ սառեցրած, բացառությամբ 0304 ապրանքային դիրքի ձկան սուկիի և այլ ձկների մսի
	0304	Ձկան սուկի և այլ ձկների միս (աղացած կամ ոչ աղացած)՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած
բ)	0305	Ձկներ՝ չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած, ապխտած կամ ապխտումից առաջ, կամ դրա ընթացքում եփած կամ առանց եփելու, ձկնալյուր՝ խոշոր ու մանր աղացվածքի և հատիկներ՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար
գ)	0306	Խեցեմորթներ՝ մասնատված կամ չմասնատված, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած. խեցեմորթներ՝ չմասնատված, շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ խաշած, սառեցրած, չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած, ալյուր՝ խոշոր ու մանր աղացվածքի և հատիկներ՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար
	0307	Փափկամորթներ՝ մասնատված կամ չմասնատված, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած. խեցեմորթներից և փափկամորթներից տարբեր ջրային այլ անողնաշարավորներ՝ կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած, ալյուր՝ մանր ու խոշոր աղացվածքի և խեցեմորթներից բացի ջրային այլ անողնաշարավորներից հատիկներ՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար
դ)		Այլ տեղում չսահմանված կամ չներառված կենդանական ծագման մթերքներ. 1-ին և 2-րդ գլուխներում նշված՝ սատկած կենդանիներ՝ ոչ պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար

		- Այլ
		- ձկնամթերք կամ խեցեմորթներից, փափկամորթներից և ջրային այլ անողնաշարավորներից պատրաստված մթերքներ, 3-րդ գլխում նշված՝ սատկած կենդանիներ.
	0511 91 10	- Ձկնային թափոն
	0511 91 90	— Այլ
(ե)	1604	Պատրաստի կամ պահածոյացրած ձուկ, ձկնկիթ և խավիարի փոխարինիչներ՝ պատրաստած ձկների ձկնկիթներից
զ)	1605	Պատրաստի կամ պահածոյացրած խեցեմորթներ, փափկամորթներ և ջրային այլ անողնաշարավորներ
է)		Մակարոնային արտադրատեսակներ՝ եփած կամ լցոնած, կամ առանց եփելու, կամ լցոնելու, (մսից կամ այլ մթերքներից), կամ այլ ձևով պատրաստված, ինչպիսիք սպագետտին, մակարոնը, լապշան, եղջրիկները, խմորագնդիկները, ռավիոլան, կաննելրոնը, կուսկուսն են՝ պատրաստ կամ ոչ պատրաստ
		- Մակարոնային արտադրատեսակներ՝ չեփած կամ լցոնած, կամ այլ ձևով պատրաստված.
	1902 20	- Մակարոնային արտադրատեսակներ՝ եփած կամ առանց եփելու կամ այլ ձևով պատրաստված.
	1902 20 10	- պարունակում է 20 %-ից ավելի՝ ըստ ձկան, խեցեմորթների, փափկամորթների կամ ջրային այլ անողնաշարավորների կշռի
ը)		Այլուր՝ մանր ու խոշոր աղացվածքի և հատիկներ, միս կամ մսի փորոտիք, ձուկ կամ խեցեմորթներ, փափկամորթներ

		կամ ջրային այլ անողնաշարավորներ՝ ոչ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար
	2301 20 00	– այլուր՝ մանր ու խոշոր աղացվածքի և հատիկներ, ձուկ կամ խեցեմորթներ, փափկամորթներ, կամ ջրային այլ անողնաշարավորներ

ԲԱԺԻՆ 1

**ՇՈՒԿԱՅԱՀԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ 1

ՇՈՒԿԱՅԱՀԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հոդված 2

1. Առաջին հոդվածում նշված մթերքների կամ մթերքների խմբերի շուկայահանման համար կարող են սահմանվել ինչպես ընդհանուր չափանիշներ, այնպես էլ դրանց շրջանակը. նշված չափանիշները կարող են, մասնավորապես, ըստ որակի, չափի կամ քաշի, փաթեթավորման, ներկայացման և պիտակավորման դասակարգում ներառել:
2. Շուկայահանման չափանիշներ սահմանելուց հետո այն մթերքները, որոնց նկատմամբ դրանք կիրառվում են, չեն կարող ցուցադրվել, վաճառքի համար առաջարկվել կամ վաճառվել, կամ այլ կերպ շուկայահանվել, եթե դրանք չեն համապատասխանում նշված չափանիշներին՝ պահպանելով այն հատուկ կանոնները, որոնք կարող են ընդունվել՝ երրորդ երկրների հետ առևտուր իրականացնելու համար:
3. Շուկայահանման չափանիշները և դրանց կիրառման մանրամասն կանոնները, այդ թվում՝ 2-րդ պարբերությամբ նշված հատուկ կանոններն ընդունվում են 38(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 3

1. Այն մթերքները, որոնց շուկայահանման համար ընդունվել են ընդհանուր չափանիշներ, պետք է ստուգվեն անդամ պետությունների կողմից՝ պարզելու համար նշված չափանիշներին դրանց համապատասխանությունը:

Նշված ստուգումը կարող է իրականացվել շուկայահանման բոլոր փուլերի և փոխադրման ընթացքում:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պատասխանատվության ենթարկելու 2-րդ հոդվածի խախտումների համար:

3. Շուկայահանման յուրաքանչյուր չափանիշն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, անդամ պետությունները ծանուցում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին այն մարմնի անվանման ու հասցեի մասին, որն օժտված է յուրաքանչյուր այն մթերքը կամ մթերքների խումբն ստուգելու լիազորությամբ, որի համար ընդունվել է շուկայահանման չափանիշը:

4. Առաջին պարբերությունը կիրառելու մանրամասն կանոններն ընդունվում են, հարկ եղած դեպքում, 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ շեշտելով մասնավորապես ստուգող մարմինների աշխատանքները համակարգելու և շուկայահանման ընդհանուր չափանիշները մեկնաբանելու և կիրառելու հարցում միասնականություն ապահովելու անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

1. Չհակասելով 79/112/ԵՏՀ (12) հրահանգի դրույթներին՝ 1(ա), (բ) և (գ) հոդվածում նշված մթերքները չեն կարող առաջարկվել վերջնական սպառողին մանրածախ վաճառքի համար՝ անկախ շուկայահանման եղանակից, քանի դեռ համապատասխան դրոշմանշման կամ պիտակավորման վրա չեն մատնանշվել՝

ա) ձկնատեսակների առևտրային անվանումները.

բ) արտադրման եղանակը (ծովից կամ ներքին ջրային ուղիներից բռնված կամ ֆերմայում աճեցված)։

գ) ձկնորսության տարածքը։

Նշված պահանջները, այնուամենայնիվ, չեն կիրառվում ձկնորսների կամ ակվակուլտուրայի մթերք արտադրողի կողմից ուղղակիորեն սպառողներին մատակարարված մթերքների փոքր քանակությունների նկատմամբ։

2. Անդամ պետությունները 1(ա) պարբերության նպատակով կազմում և հրապարակում են իրենց տարածքում ընդունված՝ սույն Կանոնակարգի I–IV հավելվածներում նշված առնվազն բոլոր ձկնատեսակների առևտրային անվանումները ոչ ուշ, քան մինչև 2002 թվականի հունվարի 1–ը։ Ցանկում նշվում է յուրաքանչյուր տեսակի լատինական անվանումը, դրանց անվանումն անդամ պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով և, հարկ եղած դեպքում, տեղական կամ տարածաշրջանային մակարդակով ընդունված կամ թույլատրված ցանկացած այլ անուն կամ անվանում։

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում 2–րդ պարբերության մեջ նշված առևտրային անվանումների ցանկը 2–րդ պարբերությամբ նշված ամսաթվից առնվազն երկու ամիս առաջ։ Անդամ պետությունները ճանաչում են մյուս անդամ պետությունների կողմից նույն լեզվով, նույն տեսակների համար ներկայացված անվանումները։

4. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, հարկ եղած դեպքում, ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան։

ԲԱԺԻՆ II

ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴՐԱ ՇՆՈՐՀՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 5

1. Սույն Կանոնակարգի նպատակներով՝ «արտադրողների կազմակերպություն» նշանակում է ցանկացած իրավաբանական անձ,

ա) որը ստեղծվել է մինչ այժմ 1(ա), (բ) և (գ) հոդվածում նշված մեկ կամ ավելի մթերքներ արտադրողների խմբի սեփական նախաձեռնությամբ՝ սառեցրած, մշակված կամ վերամշակված մթերքների դեպքում, քանի որ համապատասխան գործողություններն իրականացվել են ձկնորսական նավերի վրա.

բ) որը ստեղծվել է, մասնավորապես, ապահովելու համար, որ ձկնորսությունն իրականացվի ռացիոնալ ուղիղ գծով, և որ իրենց անդամների մթերքների վաճառքի պայմանները բարելավվեն՝ ձեռնարկելով այնպիսի միջոցներ, որոնք՝

1. կխթանեն արտադրության պլանավորումը և դրա հարմարեցումը պահանջարկին քանակի առումով, մասնավորապես, իրականացնելով ձկնորսության պլանները.
2. կխթանեն առաջարկի կենտրոնացումը.
3. կկայունացնեն գները.
4. կխթանեն ձկնորսության եղանակները, որոնք նպաստում են կայուն ձկնորսությանը.

գ) որի կանոնադրությամբ պահանջվում է, որ իր արտադրող անդամները, մասնավորապես՝

1. կիրառեն ձկնորսության, արտադրության և շուկայահանման նկատմամբ իր կողմից ընդունված կանոնները.
 2. եթե համապատասխան անդամ պետությունը որոշել է, որ իր ծուկ որսալու որոշ կամ ամբողջ քվոտան, կամ քվոտաները և (կամ) ձկնորսության կառավարման միջոցների կիրառումը պետք է կարգավորվի արտադրողների կազմակերպության կողմից, այս նպատակով կիրառեն կազմակերպության կողմից ընդունված միջոցները.
 3. ապահովեն, որ յուրաքանչյուր նավ որևէ մթերքի կամ մթերքի խմբի համար միայն պատկանի արտադրողների մեկ կազմակերպության.
 4. արտադրողների կազմակերպության միջոցով մատակարարեն իրենց կողմից արտադրված ամբողջ արտադրանքը. կազմակերպությունը կարող է, այնուամենայնիվ, որոշել, որ նշված պահանջը կարող է չիրականացվել, եթե մթերքները մատակարարվել են իր կողմից նախօրոք սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան.
 5. տրամադրեն արտադրողների կազմակերպության կողմից հարցված տեղեկությունները՝ 1(բ) պարբերությամբ նշված միջոցները սահմանելու կամ օրենքով սահմանված պարտավորությունները կատարելու կամ վիճակագրական նպատակներով.
 6. կատարեն կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական ներդրումները՝ 17(3) հոդվածի համաձայն միջամտության հիմնադրամ ստեղծելու և այն միջոցներով համալրելու նպատակով.
 7. կազմակերպության անդամներին պահեն դրա հավատարմագրումից հետո առնվազն երեք տարի և կազմակերպությունից դուրս գալու դեպքում դրա մասին կազմակերպությանը ծանուցեն առնվազն մեկ տարի առաջ.
- դ) որի կանոնադրությամբ նախատեսվում են՝
1. (գ)(1) կետում նշված կանոնները սահմանելու, ընդունելու և փոփոխելու ընթացակարգեր.

2. անդամների միջև ազգության կամ տնտեսական գործունեություն իրականացնելու հիմքով խտրականության բոլոր ձևերի բացառում.
3. արտադրողների կազմակերպությանը ֆինանսավորելու նպատակով անդամներից ֆինանսական միջոցների գանձում.
4. այնպիսի կանոններ, որոնք հնարավորություն կտան արտադրող անդամներին՝ ժողովրդավարորեն մանրամասն ուսումնասիրելու իրենց կազմակերպությունն ու դրա որոշումները.
5. պատասխանատվություն՝ կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները խախտելու, մասնավորապես, ֆինանսական ներդրումները չկատարելու համար, ինչպես նաև պատասխանատվություն՝ արտադրողների կազմակերպության կողմից սահմանված կանոնները խախտելու համար.
6. նոր անդամներ ընդունելու կանոններ.
7. կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման և բյուջետային նորմեր, այդ թվում՝ այն գործունեությունների առանձնացված հաշվառում վարելը, որի համար հավատարմագրում է շնորհվել.

ե) որը հավատարմագրվել է համապատասխան անդամ պետության կողմից՝ 2-րդ պարբերության համաձայն:

2. Անդամ պետությունները, սույն Կանոնակարգի նպատակներով, հավատարմագրում են որպես արտադրողների կազմակերպություն բոլոր այն արտադրող խմբերին, որոնք իրենց տարածքում ունեն պաշտոնական գրասենյակ, իրենց տարածքում իրականացնում են բավական ակտիվ տնտեսական գործունեություն և դիմել են հավատարմագրման համար՝ պայմանով, որ.

ա) իրենք բավարարում են 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները և բերում են համապատասխան փաստարկ, այդ թվում՝ ապացույց, որ ունեն անհրաժեշտ նվազագույն թվով արտադրող անդամներ կամ իրականացնում են ապրանքային արտադրության անհրաժեշտ նվազագույն ծավալը.

բ) կա բավարար ապացույց, որ իրենք կարող են ժամանակի և արդյունավետության առումով պատշաճ կերպով իրականացնել իրենց գործունեությունը.

գ) դրանք ունեն ազգային օրենսդրության համաձայն անհրաժեշտ կազմակերպահրավական կարգավիճակը.

3. Արտադրողների կազմակերպությունները չպետք է գերիշխող դիրք զբաղեցնեն կոնկրետ շուկայում, եթե դա անհրաժեշտ չէ՝ Պայմանագրի 33-րդ հոդվածի նպատակների համաձայն:

4. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 6

1. Անդամ պետությունները՝

ա) դիմումը բոլոր կից փաստաթղթերի հետ ներկայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում են որոշում հավատարմագրում շնորհել, թե ոչ.

բ) պարբերաբար իրականացնում են ստուգումներ՝ վստահ լինելու համար, որ արտադրողների կազմակերպությունները պահպանում են հավատարմագրման ժամկետներն ու պայմանները. արտադրողների կազմակերպությունների հավատարմագրումը կարող է դադարեցվել, եթե 5-րդ հոդվածով սահմանված պայմաններն այլևս չեն բավարարվում, կամ եթե հավատարմագրումն իրականացվել է սխալ տեղեկատվության հիման վրա. եթե կազմակերպությունը խարդախությամբ է ձեռքբերում հավատարմագրում կամ օգուտ է քաղում դրանից, ապա հավատարմագրումն անմիջապես դադարեցվում է հետադարձ ուժով:

գ) երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովին ծանուցում են հավատարմագրում շնորհելու, մերժելու կամ դադարեցնելու վերաբերյալ ցանկացած որոշման մասին:

2. Անդամ պետությունը հավատարմագրում է շնորհում արտադրողների այն կազմակերպությանը, որի պաշտոնական գրասենյակը գտնվում է իր տարածքում, սակայն որի որոշ անդամներ մեկ կամ ավելի այլ անդամ պետությունների քաղաքացիներ են՝ պայմանով, որ բավարարվում են 5-րդ հոդվածով սահմանված պայմանները:

Այն անդամ պետությունները, որոնց քաղաքացիները մեկ այլ անդամ պետության տարածքում ստեղծված արտադրողների կազմակերպության անդամներ են, այդ անդամ պետությունների հետ վարչական համագործակցություն են իրականացնում, որն անհրաժեշտ է՝ համապատասխան կազմակերպության գործունեությունն ստուգելու համար:

3. Անդամ պետությունները կարող են հավատարմագրել մեկ արտադրողների կազմակերպությանը բացառապես կոնկրետ ձկնորսական շրջանի համար, եթե, 7(1) հոդվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան, այն ներկայացուցչական է համարվել:

4. Անդամ պետությունները կարող են հավատարմագրում շնորհել արտադրողների կազմակերպությունների ասոցիացիային, եթե այն բավարարում է 5-րդ հոդվածով սահմանված պայմանները: Այնուամենայնիվ, 9-րդ և 10-րդ հոդվածները չեն կիրառվում նշված ասոցիացիայի նկատմամբ:

5. Ապահովելու համար, որպեսզի բավարարվեն 5-րդ հոդվածի և սույն հոդվածի (1)(բ) պարբերությունը, Հանձնաժողովն իրականացնում է ստուգումներ և, այդ ստուգումների համաձայն, անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել անդամ պետություններից դադարեցնել հավատարմագրումը:

6. Յուրաքանչյուր տարվա սկզբում Հանձնաժողովը Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրի «Գ» շարքում հրապարակում է նախորդ տարվա ընթացքում հավատարմագրված արտադրողների կազմակերպությունների և այն կազմակերպությունների ցանկը, որոնց հավատարմագրումը դադարեցվել է նույն ժամանակահատվածում:

7. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես, հավատարմագրման դադարեցման պայմաններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ՈՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 7

1. Եթե արտադրողների կազմակերպությունը համարվում է անդամ պետության մեկ կամ ավելի բեռնաթափման վայրերում արտադրության ու շուկայահանման ներկայացուցիչը և դիմում է ներկայացրել իրավասու անդամ պետություններին, ապա համապատասխան անդամ պետությունը կարող է պահանջել այն արտադրողներից, որոնք կազմակերպության անդամ չեն և շուկայահանում են 1-ին հոդվածում նշված մթերքներից մեկն այն վայրում, որտեղ արտադրողների կազմակերպությունն է ներկայացուցիչը, կատարելու՝

ա) կազմակերպության կողմից ներմուծված արտադրության և շուկայահանման կանոնները՝ իրագործելու համար (1)(բ) հոդվածով սահմանված նպատակները.

բ) կազմակերպության կողմից՝ 1-ին հոդվածի երկրորդ պարբերության երկրորդ պարբերության (ա) և (գ) կետերում նշված՝ թարմ ու պաղեցրած մթերքները շուկայից դուրսբերելու և փոխադրելու վերաբերյալ ընդունված կանոնները:

Այնուամենայնիվ, I հավելվածում նշված մթերքների դեպքում նշված կանոնները կարող են կիրառվել ոչ անդամների նկատմամբ միայն այն դեպքում, եթե արտադրողների կազմակերպության կողմից կիրառված գինը շուկայից մթերքների դուրսբերման գինը կամ Համայնքում վաճառքի գինն է՝ պահպանելով 21(1)(ա) հոդվածով նախատեսված շեղման սահմանը:

Անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել (ա) և (բ) կետերում նշված կանոնները վաճառքի որոշ կատեգորիաների նկատմամբ:

2. Առաջին պարբերության համաձայն պարտադիր դարձած կանոնները կիրառվում են կոնկրետ շրջանով սահմանափակված տարածքում՝ ընդհուպ մինչև շուկայում մթերքների վաճառքի առաջին փուլը՝ առավելագույնը 12 ամիս ժամկետով:

3. Անդամ պետություններն անմիջապես ծանուցում են Հանձնաժողովին այն կանոնների մասին, որոնք որոշել են պարտադիր դարձնել՝ 1-ին պարբերության համաձայն:

Եթե Հանձնաժողովը կասկածներ ունի 4-րդ պարբերությամբ նշված այն դեպքերի առնչությամբ ընդունված որոշման վավերականության հետ կապված, որտեղ կանոնների կիրառումը պետք է առոչինչ ճանաչվի, ապա նա կարող է պահանջել համապատասխան անդամ պետությանն ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու որոշման կիրառումը՝ նշված ծանուցումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Այս դեպքում և այդ ամսաթվից հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը՝

- հաստատում է, որ ծանուցված կանոնները կարող են պարտադիր դառնալ
- կամ
- անդամ պետության կողմից սահմանված կանոնների կիրառումը հիմնավորված որոշմամբ առոչինչ է հայտարարում՝ 4(ա) և (բ) պարբերությամբ նշված հանգամանքներից մեկի հիման վրա: Հանձնաժողովի որոշումն այս դեպքում կիրառվում է այն օրվանից, երբ կանոնները կասեցնելու պահանջն ուղարկվում է անդամ պետություն:

4. Հանձնաժողովը 1-ին պարբերությամբ նշված կանոնների կիրառումն առոչինչ է հայտարարում, եթե

ա) համարում է, որ կանոնների կիրառումը վտանգում է ազատ առևտուրը կամ դրանց կիրառմամբ վտանգի տակ է դրվում Պայմանագրի 33-րդ հոդվածի նպատակների իրագործումը.

բ) համարում է, որ Պայմանագրի 81(1) հոդվածը կիրառվում է այն կանոնի նկատմամբ, որը նա որոշել է տարածել մյուս արտադրողների վրա:

5. Հետստուգումներից հետո Հանձնաժողովը կարող է, ցանկացած ժամանակ, բացահայտել անվավեր ճանաչելու դեպքեր 4-րդ պարբերության համաձայն և կանոնների կիրառումն առոչինչ հայտարարել:

6. Հանձնաժողովը 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններով սահմանված ընթացակարգի յուրաքանչյուր փուլում անմիջապես տեղեկացնում է մյուս անդամ պետություններին :

7. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար 1-ին պարբերությամբ նշված կանոններին համապատասխանությունը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

8. Եթե կիրառվում է 1-ին պարբերությունը, ապա համապատասխան անդամ պետությունը կարող է որոշել, որ ոչ անդամները պետք է կազմակերպությանը վճարեն անդամ արտադրողների կողմից վճարված գումարներին համարժեք ամբողջ գումարը կամ դրա մի մասը, քանի որ այդ վճարները նախատեսված են՝ ծածկելու համար 1-ին պարբերության մեջ նշված համակարգի կիրառման հետևանքով առաջացած վարչական ծախսերը:

9. Եթե կիրառվում է 1-ին պարբերությունը, ապա անդամ պետությունը, անհրաժեշտության դեպքում արտադրողների կազմակերպությունների գործակալության միջոցով, ապահովում է այն մթերքների՝ շուկայից դուրսբերումը, որոնք չեն համապատասխանում շուկայահանման կանոններին, կամ որոնք չեն կարող վաճառվել շուկայից դուրսբերման գնին առնվազն համարժեք գնով:

10. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 8

1. Եթե կիրառվում է 7(1) պարբերությունը, ապա անդամ պետությունը կարող է փոխհատուցում տրամադրել կազմակերպության անդամներ չհանդիսացող և Համայնքում չհաստատված արտադրողներին այն մթերքների մասով, որոնք՝

- չեն կարող շուկայահանվել 7(1)(ա) հոդվածի համաձայն
- կամ
- շուկայից դուրս են բերվել 7(1)(բ) հոդվածի համաձայն:

Փոխհատուցում տրամադրվում է առանց խտրականություն դնելու ստացողների միջև՝ պայմանավորված քաղաքացիությամբ կամ տնտեսական գործունեության իրականացման վայրով: Այն չի կարող գերազանցել ստացված գումարի 60 տոկոսը՝ կիրառելով դուրսբերված քանակությունների նկատմամբ

- 20-րդ հոդվածի համաձայն՝ I հավելվածի «Ա» և «Բ» մասերում նշված մթերքների շուկայից դուրսբերման գինը
- կամ
- 22-րդ հոդվածի համաձայն՝ I հավելվածի «Գ» մասում նշված մթերքների վաճառքի գինը:

2. Առաջին պարբերության մեջ նշված փոխհատուցումը տրամադրելու հետ կապված ծախսերը կրում է համապատասխան անդամ պետությունը:

ԳԼՈՒԽ 3

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 9

1. Ձկնորսական տարվա սկզբում արտադրողների յուրաքանչյուր կազմակերպություն ձկնորսական տարվա գործունեության ծրագիր է կազմում՝ I, IV և V հավելվածներում նշված ձկնատեսակների համար, և այն անդամ պետության իրավասու մարմիններ է ուղարկում, որը պարունակում է՝

ա) մարքեթինգային ռազմավարություն, որին պետք է հետևի կազմակերպությունը՝ մատակարարման քանակը և որակը շուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար.

բ)

- I և IV հավելվածներում նշված տեսակների որսի պլան, մասնավորապես, այն տեսակների որսի պլանը, որոնց վրա դրված է որսի քվոտա, քանի որ նման տեսակներն իր անդամների բեռնաթափման վայրի զգալի մասն են կազմում.

- V հավելվածում նշված տեսակներից պատրաստվող մթերքների արտադրության պլան.

գ) այն տեսակների մատակարարումը կարգավորելու հատուկ նախնական միջոցներ, որոնք ձկնորսական տարվա ընթացքում շուկայահանման ժամանակ դժվարություններ են ներկայացնում.

դ) այն անդամների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները, որոնք խախտում են նշված պլաններն իրականացնելու համար ընդունված որոշումները:

Գործունեության ծրագիրը կարող է վերանայվել ձկնորսական տարվա ընթացքում չնախատեսված հանգամանքներ ի հայտ գալուց հետո, և դրա մասին հաղորդվում է անդամ պետության իրավասու մարմիններին:

Ցանկացած արտադրողների կազմակերպություն, որը նոր է հավատարմագրվել, կարող է, իր հավատարմագրման առաջին տարվա ընթացքում, գործունեության ծրագիր չկազմել:

2. Գործունեության ծրագիրը և դրանում կատարվող բոլոր վերանայումները հաստատվում են անդամ պետության իրավասու մարմինների կողմից:

3. Չհակասելով 6(1)(բ) հոդվածին՝ անդամ պետություններն իրականացնում են անհրաժեշտ ստուգումներ՝ ապահովելու համար, որ արտադրողների յուրաքանչյուր կազմակերպություն կատարի 1-ին պարբերությամբ նախատեսված պարտավորությունները, և պարտավորությունները չկատարելու դեպքում կիրառում են պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) եթե արտադրողների կազմակերպությունը ձկնորսական տարվա գործունեության ծրագիր չի կազմում, ապա, 1-ին պարբերությանը համապատասխան, այն չի ստանում համապատասխան ձկնորսական տարվա համար IV բաժնի համաձայն իրականացված միջամտության համար տրամադրված որևէ ֆինանսական աջակցություն.

բ) եթե արտադրողների կազմակերպությունը չի իրականացնում համապատասխան ձկնորսական տարվա գործունեության ծրագրով նախատեսված միջոցները՝

- ֆինանսական աջակցության միայն 75%-ն է տրամադրվում IV բաժնի համաձայն իրականացված միջամտության համար՝ միջոցներն առաջին անգամ չիրականացնելու դեպքում.
- ֆինանսական աջակցության միայն 50%-ն է տրամադրվում՝ միջոցները երկրորդ անգամ չիրականացնելու դեպքում և

- Ֆինանսական աջակցություն չի տրամադրվում՝ միջոցները մի քանի անգամ չիրականացնելու դեպքում:

(ա) և (բ) պարբերություններում նշված պատասխանատվության միջոցները չեն կիրառվում մինչև 2002 թվականի հունվարի 1-ը:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին անմիջապես տեղեկացնում են այն դեպքերի մասին, երբ կիրառել են 3(ա) կամ (բ) պարբերությունները:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 10

1. Չհակասելով թիվ 2792/1999 (ԵՀ) կանոնակարգի 15(1)(բ) հոդվածի համաձայն արտադրողների կազմակերպությունների ստեղծումը խթանելու և գործունեությունը դյուրացնելու համար տրամադրված աջակցությանը՝ անդամ պետությունները կարող են, սահմանափակ ժամկետով, արտադրողների կազմակերպություններին փոխհատուցում տրամադրել՝ 9-րդ հոդվածով իրենց վրա դրված պարտավորություններից բխող ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Արտադրողների այն կազմակերպությունները, որոնք հավատարմագրվել են մինչև 2001 թվականի հունվարի 1-ը, կարող են այդ ամսաթվից հետո հինգ տարի ժամկետով փոխհատուցում ստանալ:

Այս ամսաթվից հետո հավատարմագրում ստացած արտադրողների կազմակերպությունները կարող են հավատարմագրում ստանալուց հետո հինգ տարի ժամկետով փոխհատուցում ստանալ:

2. Առաջին պարբերության մեջ նշված փոխհատուցումը կազմված է հետևյալից՝

ա) I և IV հավելվածում նշված տեսակների դեպքում անդամների նավերի թվին համապատասխան գումար, որը հաշվարկվում է նվազման կարգով, VIIԱ հավելվածով սահմանված մեթոդին համապատասխան, և 500 եվրոյի չափով հաստատագրված գումար՝ 9(1)(բ) հոդվածի առաջին պարբերության մեկ տեսակներից մինչև, ընդհանուր հաշվով, 10 տեսակների համար.

բ) V հավելվածում նշված տեսակների դեպքում արտադրողների կազմակերպությունների ներկայացուցչականության աստիճանին համապատասխան գումար, որը հաշվարկվում է VIIԲ հավելվածով սահմանված մեթոդին համապատասխան: Ներկայացուցչականության աստիճանը հաշվարկվում է՝ արտադրատարածքում արտադրողների կազմակերպությունների միջոցով իրակացված արտադրության տոկոսի համաձայն, որը համապատասխան անդամ պետությունը համարում է բավականին մեծ՝ հիմնվելով անդամ պետության կողմից հավատարմագրման նպատակով սահմանված չափորոշիչների հիման վրա:

3. Անդամ պետությունները տալիս են փոխհատուցում արտադրողների կազմակերպություններին այն տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում, որի համար տրվում է փոխհատուցում այնքանով, որքանով իրենց իրավասու մարմիններն ստուգել են, որ ստացող կազմակերպությունները կատարել են 9-րդ հոդվածով իրենց վրա դրված պարտավորությունները:

4. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 11

Անդամ պետությունները կարող են լրացուցիչ աջակցություն տրամադրել արտադրողների այն կազմակերպություններին, որոնք, 9(1) հոդվածում նշված գործունեության ծրագրերի շրջանակներում, մշակում են ձկան շուկայահանման կազմակերպումը և գործունեությունը բարելավելու, ինչպես նաև առաջարկի ու պահանջարկի միջև ավելի լավ հավասարակշռություն ապահովելու միջոցներ՝ թիվ 2792/1999 (ԵՀ) կանոնակարգին և, մասնավորապես, դրա 14-րդ ու 15-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 12

1. Անդամ պետությունները կարող են կոնկրետ հավատարմագրում շնորհել 5(1) հոդվածում նշված՝ թիվ 2406/96 (ԵՀ) կանոնակարգով (13) սահմանված՝ ընդհանուր շուկայահանման չափանիշներով կարգավորվող մթերքներ կամ ակվակուլտուրայի մթերք

շուկայահանող արտադրողների կազմակերպություններին այն ժամանակ, երբ նրանք իրավասու անդամ պետությունների կողմից հաստատված մթերքների որակը բարելավելու պլան ներկայացնեն:

2. Առաջին պարբերության մեջ նշված պլանների առաջնային նպատակը արտադրության և շուկայահանման բոլոր փուլերը ներառելն է: Նշված պլանները, մասնավորապես, ներառում են՝

- նավի վրա պահելու ժամանակ կամ արտադրման ընթացքում մթերքների որակի զգալի բարելավման մեթոդներ.
- որակի օպտիմալ պահպանման մեթոդներ, հարկ եղած դեպքում, որսի տեսակների, մթերքների բեռնաթափման, էքստրակցիայի, սորտավորման, փոխադրման և շուկայահանման ընթացքում.
- նշված նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան մեթոդների և «նուր հաու»-ի կիրառումը.
- պլանավորված միջոցների, այդ թվում՝ նախապատրաստվող դասընթացների, վերապատրաստումների և ներդրումների նկարագիրը.

3. Անդամ պետություններն արտադրողների կազմակերպությունների կողմից իրենց տրամադրված պլաններն ուղարկում են Հանձնաժողով: Նման պլանները կարող են չհաստատվել անդամ պետության իրավասու մարմնի կողմից, քանի դեռ դրանք չեն ուղարկվել Հանձնաժողով և դրանից հետո չի անցել 60 օր, որի ընթացքում Հանձնաժողովը կարող է պահանջել փոփոխություններ կատարել պլանում կամ մերժել պլանը:

4. Սույն հոդվածի համաձայն՝ արտադրողների կազմակերպություններին շնորհված հատուկ հավատարմագրումը հիմք է՝ թիվ 2792/1999 (ԵՀ) կանոնակարգի 15(1)(բ) հոդվածի համաձայն տրամադրված ֆինանսական աջակցություն ստանալու համար:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

**ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Հոդված 13

1. Անդամ պետությունները կարող են, սույն Կանոնակարգի իմաստով, որպես միջնյուղային կազմակերպություններ հավատարմագրել իրենց տարածքում հաստատված բոլոր այն իրավաբանական անձանց, որոնք համապատասխան դիմում են ներկայացրել, և որոնք 1-ին հոդվածում նշված մթերքների արտադրության և (կամ) դրանց վաճառքի և (կամ) մշակման հետ կապված գործողություններն իրականացնող ներկայացուցիչներ ունեն՝ պայմանով, որ

ա) դրանք ստեղծվել են միջնյուղային կազմակերպություններ կազմող բոլոր կամ որոշ կազմակերպությունների, կամ ասոցիացիաների նախաձեռնությամբ.

բ) դրանք տվյալ շրջանում կամ շրջաններում իրականացնում են ձկնամթերքների ու ձկնամթերքից ստացված մթերքների արտադրության և (կամ) դրանց վաճառքի և (կամ) մշակման մեծ մասն ու, եթե ներգրավված են մեկից ավելի շրջաններ, դրանք կարող են ցույց տալ, որ յուրաքանչյուր շրջանի յուրաքանչյուր ճյուղում ներկայացվածության անհրաժեշտ նվազագույն մակարդակն ունեն.

գ) դրանք անձամբ չեն զբաղվում ձկնամթերքների և ձկնամթերքից ստացված մթերքների արտադրությամբ ու մշակմամբ կամ շուկայահանմամբ.

դ) դրանք Համայնքի մեկ կամ ավելի շրջաններում իրականացնում են հետևյալ միջոցները՝ Համայնքի կանոններին, մասնավորապես մրցակցության կանոններին համապատասխանող պայմանների համաձայն՝ հաշվի առնելով սպառողների շահերը, և պայմանով, որ դրանք չեն խոչընդոտի շուկայի կազմակերպման սահուն աշխատանքը՝

- բարելավելով արտադրության և շուկայի վերաբերյալ գիտելիքներն ու դրանց թափանցիկությունը.
- օժանդակելով ձկնամթերքի շուկայահանման եղանակի առավել լավ համակարգմանը՝ մասնավորապես հետազոտություններ և շուկայի ուսումնասիրություններ կատարելու միջոցով,
- ուսումնասիրելով և մշակելով մեթոդներ շուկայի, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործունեությունն օպտիմալացնելու նպատակով.
- մշակելով ստանդարտ պայմանագրեր, որոնք համապատասխանում են Համայնքի կանոններին.
- տրամադրելով տեղեկություններ և իրականացնելով հետազոտություն, որոնք անհրաժեշտ են այնպիսի մթերքներ արտադրելու համար, որոնք ավելի շատ են համապատասխանում շուկայի պահանջներին և սպառողների ճաշակին ու ակնկալիքներին, մասնավորապես՝ կապված արտադրանքի որակի և օգտագործման մեթոդների հետ, որոնք նպաստում են ռեսուրսների կայուն օգտագործմանը.
- մշակելով մեթոդներ ու գործիքներ և կազմակերպելով վերապատրաստման ծրագրեր՝ արտադրանքի որակը բարելավելու նպատակով.
- օգտագործելով ծագման տեղանունների, որակի չափանիշների և աշխարհագրական անվանումների հնարավորություններն ու պաշտպանելով դրանք.
- սահմանելով ձուկ բռնելու և ձկնամթերքը շուկայահանելու կանոններ, որոնք ավելի խիստ են, քան Համայնքի կամ ազգային կանոնները.
- հնարավորինս շատ օգտագործելով ձկնամթերքի հատկությունները.
- խթանելով ձկնամթերքի օգտագործումը:

2. Անդամ պետությունները, նախքան հավատարմագրում շնորհելը, ծանուցում են Հանձնաժողովին միջճյուղային այն կազմակերպությունների մասին, որոնք դիմել են հավատարմագրում ստանալու նպատակով՝ տրամադրելով իրենց ներկայացուցիչների և

իրենց տարբեր գործողությունների մասին բոլոր համապատասխան տեղեկությունները՝ գնահատման համար անհրաժեշտ բոլոր այլ տեղեկությունների հետ միասին:

Հանձնաժողովը կարող է ծանուցումն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում մերժել հավատարմագրումը:

3. Անդամ պետությունները՝

ա) որոշում են հավատարմագրում շնորհել, թե ոչ, դիմումը բոլոր կից փաստաթղթերի հետ ներկայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում.

բ) պարբերաբար իրականացնում են ստուգումներ՝ վստահ լինելու համար, որ միջնուղային կազմակերպությունները պահպանում են հավատարմագրման ժամկետներն ու պայմանները.

գ) դադարեցնում են հավատարմագրումը, եթե

i) սույն Կանոնակարգով սահմանված՝ հավատարմագրման ժամկետներն ու պայմաններն այլևս չեն բավարարվում.

ii) միջնուղային կազմակերպությունն անտեսում է 14-րդ հոդվածով սահմանված արգելքներից որևէ մեկը կամ վտանգում է շուկայի կազմակերպման սահուն աշխատանքները՝ չհակասելով ազգային իրավունքի համաձայն ցանկացած կերպ կրած պատասխանատվության ցանկացած այլ միջոցի.

դ) երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովին են ծանուցում հավատարմագրում շնորհելու, մերժելու կամ դադարեցնելու վերաբերյալ ցանկացած որոշման մասին:

4. Հանձնաժողովը ստուգումների միջոցով ստուգում է, թե արդյոք միջնուղային կազմակերպությունները կատարում են 1 և 3(բ) պարբերությունները և կարող է, նշված ստուգումների արդյունքի հիման վրա, պահանջել անդամ պետությունից դադարեցնել հավատարմագրումը:

5. Հավատարմագրումն իրենից ներկայացնում է 1(դ) պարբերության մեջ նշված միջոցների իրականացման թույլտվություն, որը համահունչ է սույն Կանոնակարգի պայմաններին:

6. Հանձնաժողովը Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրի «Գ» շարքում հրապարակում է հավատարմագրում ստացած միջնուղային կազմակերպությունների ցանկը՝ նշելով դրանց տնտեսական գործունեության կամ գործունեության իրականացման վայրը, ինչպես նաև 15-րդ հոդվածի իմաստով իրականացվող գործունեությունը: Հավատարմագրման դադարեցման մասին պետք է իրազեկել հանրությանը:

7. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները և, մասնավորապես, միջնուղային կազմակերպությունների գործունեության մասին անդամ պետությունների կողմից Հանձնաժողով հաշվետվություն ներկայացնելու պայմանները, ժամկետներն ու հաճախականությունը կարգավորող կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2

ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 14

Չնայած թիվ 26 կանոնակարգի 1-ին հոդվածին՝ Պայմանագրի 81(1) հոդվածը չպետք է կիրառվի հավատարմագրված միջնուղային այն կազմակերպությունների համաձայնությունների, որոշումների և համաձայնեցված գործողությունների նկատմամբ, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի 13(1)(դ) հոդվածում նշված միջոցներն իրականացնելու համար, որոնք, չխախտելով Համայնքի իրավունքի կոնկրետ դրույթների համաձայն միջնուղային կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցները, չպետք է՝

ա) ֆիքսված գին կիրառելու պարտավորություն նախատեսեն.

բ) Համայնքի տարածքում շուկաների որևէ ձևով հատվածավորման հանգեցնեն.

գ) տարբեր պայմաններ կիրառեն այլ առևտրային գործընկերների հետ համարժեք գործարքներ կնքելու նկատմամբ՝ դրանով իսկ նրանց դնելով մրցակցային անբարենպաստ պայմանների մեջ.

դ) վերացնեն մրցակցությունը՝ համապատասխան մթերքների հիմնական մասի առումով.

ե) սահմանափակեն մրցակցությունն այնպիսի եղանակներով, որոնք էական դեր չեն խաղում միջնուղային կազմակերպությունների կողմից հետապնդած՝ ձկնարդյունաբերության ընդհանուր քաղաքականության նպատակներն իրագործելու հարցում:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդված 15

1. Եթե կոնկրետ շրջանում կամ անդամ պետության շրջաններում գործող միջնուղային կազմակերպությունը համարվում է համապատասխան մթերքի արտադրության և (կամ) վաճառքի, և (կամ) մշակման ներկայացուցիչ, ապա տվյալ անդամ պետությունը կարող է, կազմակերպության խնդրանքով, այդ կազմակերպությունում համաձայնեցված որոշ համաձայնություններ, որոշումներ կամ համաձայնեցված գործողություններ սահմանափակ ժամանակով պարտադիր դարձնել տվյալ շրջանում կամ շրջաններում գործող կազմակերպության անդամ չհանդիսացող այլ օպերատորների համար՝ անկախ այն հանգամանքից, անհատներ են նրանք, թե՛ խմբեր:

2. Միջնուղային կազմակերպությունը պետք է 1-ին պարբերության իմաստով համարվի ներկայացուցիչ, եթե նա անդամ պետության տվյալ շրջանում կամ շրջաններում իրականացնում է համապատասխան մթերքի արտադրության և(կամ) վաճառքի և(կամ) մշակման առնվազն երկու երրորդը: Եթե այլ օպերատորների նկատմամբ կանոնների տարածման կիրառումն ընդգրկում է մեկից ավելի շրջաններ, ապա միջնուղային

կազմակերպությունը պետք է ապացուցի, որ համապատասխան յուրաքանչյուր շրջանում յուրաքանչյուր ճյուղի ներկայացուցիչն է:

3. Այն կանոնները, որոնք անհրաժեշտ է տարածել այլ օպերատորների վրա,

ա) պետք է վերաբերեն հետևյալներից որևէ մեկին՝

— տեղեկատվություն՝ արտադրության և շուկայի վերաբերյալ.

— արտադրության ավելի խիստ կանոններ, քան նախատեսված են Համայնքի կամ ազգային կանոններով.

— օրինակելի պայմանագրերի կնքում, որոնք համատեղելի են Համայնքի կանոնների հետ.

— շուկայավարման վերաբերյալ կանոններ.

բ) պետք է ուժի մեջ լինեն առնվազն մեկ տարի.

գ) կարող են պարտադիր դարձվել ոչ ավելի, քան երեք առևտրային տարիների ընթացքում.

դ) չպետք է որևէ վնաս պատճառեն տվյալ անդամ պետության այլ շրջաններում կամ այլ անդամ պետություններում գործող մյուս օպերատորներին:

Հոդված 16

1. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին անմիջապես ծանուցեն այն կանոնների մասին, որոնք նրանք մտադիր են պարտադիր դարձնել մեկ կամ ավելի կոնկրետ շրջանների բոլոր օպերատորների համար՝15(1) հոդվածի համաձայն: Հանձնաժողովը որոշում է, որ անդամ պետությունն իրավունք չունի կիրառելու կանոնները, եթե՝

ա) նա համարի, որ կանոնների կիրառումը կվտանգի ազատ առևտուրը կամ, որ Պայմանագրի 33-րդ հոդվածով սահմանված նպատակները վտանգված են կամ

բ) նա համարի, որ այն համաձայնությունը, որոշումը կամ համաձայնեցված գործողությունը, որը որոշել է տարածել այլ արտադրողների նկատմամբ, հակասում են Պայմանագրի 81(1) հոդվածի դրույթներին, կամ

գ) նա համարի, որ սույն Կանոնակարգի 15-րդ հոդվածի դրույթները չեն կատարվել:

Կանոնները չեն կարող պարտադիր դարձվել, քանի դեռ Հանձնաժողովի կողմից ծանուցումն ստանալուց հետո երկու ամիս ժամկետ չի անցել կամ Հանձնաժողովն այդ ժամկետում չի նշել այն մասին, որ չի առարկում նշված կանոնների տարածմանը:

2. Եթե, հետստուգումներից հետո Հանձնաժողովը կասկածներ ունի 1(ա), (բ) կամ (գ) պարբերության մեջ նշված հանգամանքների նկատմամբ կանոնների կիրառման մասին որոշման վավերականության վերաբերյալ, ապա այն պետք է դիմի տվյալ անդամ պետությանը, որպեսզի վերջինս ամբողջությամբ կամ մասամբ կասեցնի որոշման կիրառումը: Այս դեպքում և այդ օրվանից հետո երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը պետք է՝

— թույլ տա կասեցման վերացումը

— կամ

— հիմնավորված որոշմամբ առոչինչ ճանաչի անդամ պետությունների կողմից սահմանված կանոնների կիրառումը՝ հիմնվելով թվարկված հանգամանքներից որևէ մեկի վրա: Այս դեպքում Հանձնաժողովի որոշումը կիրառվում է այն օրվանից, երբ կանոնները կասեցնելու պահանջն ուղարկվում է անդամ պետություն:

3. Հանձնաժողովը 38(1) հոդվածում նշված կոմիտեին տեղեկացնում է 1-ին պարբերությամբ նախատեսված միջնուղային համաձայնությունների տարածման և 2-րդ պարբերությամբ նախատեսված գործող կանոնների կասեցման կամ դրանց ուժը կորցնելու վերաբերյալ ցանկացած որոշման յուրաքանչյուր փուլի մասին:

4. Եթե կիրառվում են մեկ կամ ավելի մթերքների համար նախատեսված կանոնները և հավատարմագրված միջնուղային կազմակերպություններն իրականացնում են 15(3)(ա) հոդվածում նշված գործողություններից մեկը կամ մի քանիսը, և այդ գործողություններն ընդհանուր տնտեսական շահ են ներկայացնում այն օպերատորների համար, որոնք նշված մթերքներից մեկի կամ մի քանիսի հետ կապված գործողություններ են

իրականացնում, ապա հավատարմագրում շնորհած անդամ պետությունը կարող է որոշել, որ անհատներն ու խմբերը, որոնք կազմակերպության անդամ չեն, սակայն որոնք օգտվում են նշված գործողություններից, կազմակերպությանը վճարեն ֆինանսական փոխհատուցումների ամբողջ ծավալին կամ մի մասին համարժեք այնքան գումար, որքան վճարում են կազմակերպության անդամները, որպեսզի տրված փոխհատուցումներով ծածկվեն նշված գործողությունների իրականացման հետ կապված ծախսերը:

ԲԱԺԻՆ IV

ԳՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1

ԳՆԵՐԸ

Հոդված 17

Ընդհանուր դրույթներ

1. Առաջին հոդվածում թվարկված մթերքների համար արտադրողների կազմակերպությունները կարող են շուկայից դուրսբերման այնպիսի գին սահմանել, որից ցածր գնով նրանք չեն վաճառի իրենց անդամների կողմից մատակարարված մթերքները:

Այս դեպքում շուկայից դուրսբերված մթերքների քանակության համար արտադրողների կազմակերպությունները՝

— պետք է փոխհատուցում տրամադրեն անդամներին՝ I հավելվածի «Ա» և «Բ» մասերում ու IV հավելվածում թվարկված մթերքների համար, որոնք համապատասխանում են 2-րդ հոդվածի համաձայն ընդունված չափանիշներին.

— կարող են փոխհատուցում տրամադրել անդամներին 1-ին հոդվածում նշված այլ մթերքների համար:

Առաջին հոդվածում թվարկված յուրաքանչյուր մթերքի՝ շուկայից դուրսբերման գինը կարող է սահմանվել 5-րդ պարբերության համաձայն:

2. Արտադրող կազմակերպությունները շուկայից դուրսբերված մթերքների տնօրինման հետ կապված հարցերը որոշում են այնպես, որ չվնասեն այդ մթերքների նորմալ շուկայահանումը:

3. Մթերքների՝ շուկայից դուրսբերման հետ կապված միջոցառումները ֆինանսավորելու համար արտադրող կազմակերպությունները պետք է ստեղծեն միջամտության հիմնադրամ, որը կհամալրվի վաճառքի համար առաջարկված քանակություններին համահունչ կատարված ներդրումներով կամ, որպես այլընտրանք, պետք է համահարթեցման համակարգ կիրառվի:

4. Արտադրող կազմակերպությունները հետևյալ տեղեկությունները տրամադրում են պետական մարմիններին, որոնք էլ իրենց հերթին դրանք փոխանցում են Հանձնաժողովին՝

- այն մթերքների ցանկը, որոնց համար նրանք մտադիր են գործի դնել 1-ին պարբերության մեջ նշված համակարգը.
- այն ժամանակահատվածը, երբ շուկայից դուրսբերման գները կիրառելի են.
- շուկայից դուրսբերման համար առաջարկվող և կիրառվող գների մակարդակը:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

Կողմնորոշիչ գինը

1. Մինչև ձկնորսական տարին սկսելը՝ պետք է I հավելվածում թվարկված մթերքներից յուրաքանչյուրի, ինչպես նաև II հավելվածում թվարկված մթերքներից յուրաքանչյուրի և մթերքների խմբերի համար սահմանվի կողմնորոշիչ գին:

Այս գները վավեր են Համայնքի ամբողջ տարածքում և սահմանվում են ձկնորսական յուրաքանչյուր տարվա և յուրաքանչյուր այն ժամանակահատվածի համար, որոնցից տարին բաղկացած է:

2. Կողմնորոշիչ գինը պետք է հիմնված լինի՝

— այն միջին գների վրա, որոնք գրանցվել են մեծածախ շուկաներում կամ նավահանգիստներում Համայնքի արդյունքների զգալի մասի համար այն տարվան անմիջապես նախորդող երեք ձկնորսական տարիների ընթացքում, որի համար սահմանվում է կողմնորոշիչ գինը.

— հաշվի առնելով արտադրության և պահանջարկի միտումները:

Գինը սահմանելիս պետք է հաշվի առնել նաև հետևյալի ապահովման անհրաժեշտությունը՝

— շուկայական գների կայունացումը և Համայնքում ավելցուկների ձևավորումից խուսափելը.

— արտադրողների եկամտի ավելացմանն օժանդակելուն նպաստելը.

— սպառողների շահերը հաշվի առնելը:

3. Խորհուրդը, Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա որակյալ մեծամասնությամբ որոշում ընդունելով, որոշում է 1-ին պարբերության մեջ նշված մոտավոր արժեքները:

Հոդված 19

Գնի մասին հաշվետվություն ներկայացնելը

1. Այն ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, երբ կիրառվում է կողմնորոշիչ գինը, անդամ պետությունները Հանձնաժողովին են ծանուցում իրենց մեծածախ շուկաներում կամ իրենց նավահանգիստներում 18(1) հոդվածում նշված մթերքների համար գրանցված գների մասին:

2. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 20

Համայնքում շուկայից դուրսբերման գները

1. Համայնքում շուկայից դուրսբերման գինը սահմանվում է I հավելվածի «Ա» և «Բ» մասերում թվարկված մթերքներից յուրաքանչյուրի թարմության, չափսի կամ կշռի և ներկայացնելու հիման վրա՝ կիրառելով 18-րդ հոդվածի համաձայն սահմանված կողմնորոշիչ գնի նկատմամբ փոխակերպման գործակիցը: Համայնքում շուկայից դուրսբերման գինը չպետք է ոչ մի դեպքում գերազանցի կողմնորոշիչ գնի 90%-ը:
2. Համայնքի հիմնական սպառման կենտրոններից շատ հեռու գտնվող բեռնաթափման տարածքներում արտադրողների համար պատշաճ պայմաններով շուկա մուտք գործելը հնարավոր դարձնելու համար 1-ին պարբերության մեջ նշված գները կարող են ըստ ուղղիչ գործակցի սահմանվել յուրաքանչյուր տարածքի համար:
3. Որպեսզի արտադրողները կիրառեն սույն հոդվածը, մասնավորապես, սահմանեն Համայնքում շուկայից դուրսբերման գինը հաշվարկելու տարր ծառայող կողմնորոշիչ գնի տոկոսը և որոշեն 2-րդ պարբերության մեջ նշված բեռնաթափման տարածքները, ինչպես նաև սահմանեն գները, ապա դուրսբերման գինը պետք է ընդունվի 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ 2

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 21

Մթերքների՝ շուկայից դուրսբերման համար նախատեսված ֆինանսական փոխհատուցումը

1. Անդամ պետությունները ֆինանսական փոխհատուցում են տրամադրում արտադրողների այն կազմակերպություններին, որոնք, 17-րդ հոդվածի համաձայն, շուկայից դուրս են բերում I հավելվածի «Ա» և «Բ» մասերում թվարկված մթերքները՝ պայմանով, որ.

ա) այս կազմակերպությունների կողմից կիրառվող՝ շուկայից դուրսբերման գինը լինի 20-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ Համայնքում շուկայից դուրսբերման գինը, այնուամենայնիվ, թույլատրելով այս գնից 10% ցածր և 10% բարձր շեղում, մասնավորապես, հաշվի առնելու համար շուկայական գների սեզոնային տատանումները

բ) շուկայից դուրսբերված մթերքները բավարարեն 2-րդ հոդվածի համաձայն ընդունված շուկայահանման չափանիշները և ունենան համապատասխան որակ, որը սահմանվում է 2(3) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան.

գ) (ա) կետում նշված՝ շուկայից դուրսբերման գինը կիրառվում է ձկնորսական ամեն տարվա ընթացքում յուրաքանչյուր մթերքի համապատասխան կատեգորիայի նկատմամբ. այնուամենայնիվ, արտադրողների կազմակերպությունը, որը, որպես 5(1) հոդվածում նշված միջոցներից մեկը, արգելք է դնում ձկնատեսակների որսի և մթերքների կատեգորիաների վաճառքի նկատմամբ, կարող է մթերքների այդ կատեգորիաների նկատմամբ չկիրառել Համայնքում շուկայից դուրսբերման գները:

2. Ֆինանսական փոխհատուցում է տրամադրվում միայն այն դեպքում, երբ շուկայից դուրս հանված մթերքները տնօրինվում են մարդու կողմից սպառման նպատակից բացի այլ նպատակներով կամ այնպես, որ դրանց տնօրինումը չխոչընդոտի այլ մթերքների նորմալ շուկայահանումը:

3. 1-ին պարբերության մեջ նշված մթերքների համար.

ա) ֆինանսական փոխհատուցումը պետք է հավասար լինի՝

i) դուրս հանված քանակությունների համար արտադրողների կազմակերպության կողմից կիրառվող շուկայից դուրսբերման գնի 85%-ին՝ չգերազանցելով յուրաքանչյուր տարի վաճառքի հանված համապատասխան մթերքների տարեկան քանակությունների 4%-ը.

ii) 2003 թվականի ձկնորսական տարվա համար դուրս հանված քանակությունների համար արտադրողների կազմակերպության կողմից կիրառվող շուկայից դուրսբերման գնի 55%-ին, որը ծովային օրգանիզմների դեպքում գերազանցում է յուրաքանչյուր տարի վաճառքի հանված համապատասխան մթերքների տարեկան քանակությունների 4%-ը, սակայն չի գերազանցում 10%-ը, ինչպես

նաև այլ տեսակների դեպքում՝ 8%-ը. 2001 և 2002 թվականների ձկնորսական տարիների համար այն պետք է համապատասխանաբար հավասար լինի 75%-ի և 65%-ի.

բ) ֆինանսական փոխհատուցում չի տրվում շուկայից դուրս հանված այն քանակությունների համար, որոնք ծովային օրգանիզմների դեպքում գերազանցում են յուրաքանչյուր տարի արտադրողների կազմակերպությունների կողմից վաճառքի հանված քանակությունների 10%-ը և մյուս տեսակների դեպքում՝ 8%-ը:

4. Արտադրողների կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական փոխհատուցման գումարը հաշվարկելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր անդամների արդյունքները՝ ներառյալ 7-րդ հոդվածի համաձայն մեկ այլ կազմակերպության կողմից շուկայից դուրս հանված ցանկացած քանակություն:

5. Ֆինանսական փոխհատուցման չափը նվազեցվում է մարդու կողմից սպառման նպատակից բացի այլ նպատակների համար նախատեսված մթերքների ստանդարտ գումարային արժեքով կամ, 2-րդ պարբերությանը համապատասխան, մարդու կողմից սպառման համար նախատեսված մթերքների տնօրինումից ստացված մաքուր եկամուտով: Նշված արժեքը սահմանվում է ձկնորսական տարվա սկզբում: Այն, այնուամենայնիվ, փոփոխվում է, եթե Համայնքի շուկայում նկատվում են գների էական և երկարատև փոփոխություններ:

6. Եթե արտադրողների կազմակերպությունները 1-ին պարբերության մեջ նշված՝ շուկայից դուրսբերման գործընթաց են իրականացնում, ապա նրանք շուկայից դուրս բերված քանակությունների համար փոխհատուցում են տրամադրում իրենց անդամներին, առնվազն 3(ա) պարբերությանը համապատասխան հաշվարկված՝ ֆինանսական փոխհատուցման գումարի չափին հավասար գումար, այդ թվում՝ այդ կազմակերպության կողմից կիրառվող շուկայից դուրսբերման գնի 10%-ին հավասար գումար:

Այնուամենայնիվ, արտադրողների կազմակերպությունները կարող են, պատասխանատվության միջոցների ներքին համակարգի համաձայն, իրենց անդամներին տրամադրել ավելի քիչ չափով փոխհատուցում, քան նախորդ ենթապարբերության մեջ նշված փոխհատուցման չափն է՝ պայմանով, որ

տարբերությունը կմնա պահուստային ֆոնդում, որը բացառապես կօգտագործվի հետագա միջամտության գործողությունների համար:

7. Շուկայի գործունեության զգալի խաթարումների դեպքում Հանձնաժողովը, 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, կարող է միջոցներ ձեռնարկել՝ փոփոխելու համար 3-րդ պարբերության դրույթները: Ընդունված միջոցները չպետք է վեց ամսից ավելի իրականացվեն:

8. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 22

Համայնքում վաճառքի գները

I հավելվածի «Գ» մասում թվարկված մթերքներից յուրաքանչյուրի համար Համայնքում վաճառքի գինը սահմանվում է շուկայից դուրսբերման գները սահմանելու համար 20-րդ հոդվածով սահմանված նույն պայմաններով:

Հոդված 23

Ֆինանսական աջակցությունը

1. Ներքոհիշյալ մթերքների համար ֆինանսական աջակցություն է տրամադրվում.
 - i) I հավելվածի «Ա» և «Բ» մասերում թվարկված մթերքները, որոնք շուկայից դուրս են բերվել 20-րդ հոդվածով սահմանված շուկայից դուրսբերման գնով.
 - ii) I հավելվածի «Գ» մասում թվարկված մթերքները, որոնք վաճառքի են հանվել, սակայն պարզվում է, որ գնորդն այդ մթերքը ձեռք չի բերել 22-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ Համայնքում վաճառքի գնով:

Նշված գներից 10% ցածր և 10% բարձր շեղում, այնուամենայնիվ, թույլատրվում է, մասնավորապես, հաշվի առնելու համար շուկայական գների սեզոնային տատանումները:

2. Ֆինանսական աջակցություն կտրամադրվի միայն նշված քանակությունների համար, որոնք.

ա) մատակարարվել են անդամ հանդիսացող արտադրողի կողմից.

բ) բավարարում են կոնկրետ որակի, չափսի և ներկայացնելու պահանջները.

գ) մշակված են դրանք կայունացնելու համար և պահված կամ պահպանված են սահմանվելիք պայմաններով ու ժամանակահատվածով:

3. Աջակցությունը կարող է տրամադրվել յուրաքանչյուր տարի վաճառքի հանված մթերքների 18%-ին համարժեք քանակով՝ մթերքներից յուրաքանչյուրի համար, որն իր մեջ չի ներառում նշված այն քանակությունների տոկոսը, որի մասով, 21-րդ հոդվածի համաձայն, ֆինանսական փոխհատուցում է տրամադրվել:

Աջակցության չափը չի կարող գերազանցել տեխնիկական և ֆինանսական ծախսերի չափը, որոնք կատարվում են կայունացման և պահման նպատակով՝ էական համարվող գործողությունների համար:

4. Սույն հոդվածում նշված մշակման մեթոդներն են՝

ա)

— սառեցումը.

— աղադրումը.

— չորացումը.

— մարինադացումը.

— և, անհրաժեշտության դեպքում,

— եռացումն ու պաստերացումը.

բ) ֆիլեի առանձնացումը կամ կտրատումը և, անհրաժեշտության դեպքում, նաև գլխատումը, եթե այս գործողությունների հետ իրականացվում են նաև (ա) կետում թվարկված գործողությունները:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 24

Արտադրողների կազմակերպությունների կողմից մթերքների՝ շուկայից դուրսբերումը և փոխադրումը

1. IV հավելվածում թվարկված մթերքների համար անդամ պետությունները պետք է հաստատագրված դրույքաչափով աջակցություն ցուցաբերեն արտադրողների այն կազմակերպություններին, որոնք միջամտում են՝ համաձայն 17-րդ հոդվածի՝ պայմանով, որ.

ա) այդ կազմակերպությունները, նախքան ձկնորսական տարվա սկիզբը, սահմանեն մթերքների՝ շուկայից դուրսբերման գինը, այսուհետ՝ «ինքնուրույն սահմանված դուրսբերման գինը». անդամ պետությունները պետք է այդ գինը կիրառեն ձկնորսական տարվա ընթացքում, որից թույլատրվում է կատարել 10% ցածր և 10% բարձր շեղում. այնուամենայնիվ, գինը չի կարող գերազանցել նախորդ երեք ձկնորսական տարիների ընթացքում համապատասխան արտադրողների կազմակերպությունների գործունեության ոլորտում համապատասխան մթերքների կատեգորիաների համար գրանցված միջին կշռված գնի 80%-ը.

բ) շուկայից դուրս բերված մթերքները բավարարեն 2-րդ հոդվածի համաձայն ընդունված շուկայահանման չափանիշները և ունենան համապատասխան որակ, որը սահմանվում է 2(3) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն.

գ) շուկայից դուրս բերված մթերքների համար փոխկապակցված արտադրողներին տրվող փոխհատուցումը համարժեք է արտադրողների կազմակերպությունների կողմից կիրառվող ինքնուրույն սահմանված դուրսբերման գնին:

2. Հաստատագրված դրույքաչափով աջակցություն տրամադրվում է շուկայից դուրս բերված այն քանակությունների համար, որոնք վաճառքի են հանվել 5(1) հոդվածին համապատասխան, և որոնք տնօրինվում են այնպես, որ չազդեն արտադրության նորմալ տնօրինման վրա:

3. Հաստատագրված դրույքաչափով աջակցության գումարը կազմում է տվյալ ձկնորսական տարվա ընթացքում կիրառվող ինքնուրույն սահմանված դուրսբերման գնի 75%-ը. այս գումարը նվազեցվում է այն մթերքների ստանդարտ գումարային արժեքով, որոնք տնօրինվում են 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով:

4. Հաստատագրված դրույքաչափով աջակցությունը տրամադրվում է նաև շուկայից դուրս բերված այն քանակությունների համար, որոնք մշակվում են դրանք կայունացնելու համար և պահվում կամ պահպանվում են՝ սահմանվելիք պայմաններով ու ժամանակահատվածով: Նման դեպքերում հաստատագրված դրույքաչափով աջակցության չափը չի կարող գերազանցել տեխնիկական և ֆինանսական ծախսերի չափը, որոնք կատարվում են կայունացման ու պահման համար էական համարվող գործողությունների համար:

5. 2-րդ պարբերության համաձայն հաստատագրված դրույքաչափով աջակցության ենթակա քանակությունները չեն կարող գերազանցել 5(1) հոդվածին համապատասխան վաճառքի հանված մթերքների տարեկան քանակությունների 5%-ը:

Երկրորդ և չորրորդ պարբերությունների համաձայն հաստատագրված դրույքաչափով աջակցության ենթակա քանակությունները չեն կարող միասին գերազանցել առաջին ենթապարբերության մեջ նշված տարեկան քանակությունների 10%-ը:

6. Համապատասխան անդամ պետությունները ներմուծում են տեսչական ստուգումների միջոցառումներ՝ ապահովելով, որ այն մթերքները, որոնց մասով հաստատագրված դրույքաչափով աջակցություն է կիրառվում, իրականում հավակնում են այդ աջակցությանը:

Տեսչական ստուգման միջոցառումների նպատակներով, հաստատագրված դրույքաչափով աջակցություն ստացողները պետք է վարեն այն մթերքների պաշարների գրանցամատյանը, որոնք բավարարում են սահմանվելիք չափորոշիչը: Անդամ պետությունները, սահմանվելիք ժամկետներում, Հանձնաժողով աղյուսակ են ուղարկում, որտեղ նշվում է մեծածախ շուկաներում կամ նավահանգիստներում մթերքների և մթերքների կատեգորիաների միջին գները:

7. Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, որոշում է կայացնում I հավելվածի «Ա» մասում նշված մթերքների ցանկում դրանք ընդգրկելու մասին՝ կախված սույն հոդվածով կարգավորվող տեսակների գների հավասարեցումից:

8. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 25

Մթերքների մասնավոր պահման համար տրամադրվող աջակցությունը

1. Նախքան ձկնորսական տարվա սկիզբը՝ Համայնքում վաճառքի գինը սահմանվում է II հավելվածում նշված յուրաքանչյուր մթերքի համար այն մակարդակով, որն առնվազն հավասարեցվում է 18(1) հոդվածում նշված կողմնորոշիչ գնի 70%-ին և չի գերազանցում 90%-ը:

2. Մթերքների մասնավոր պահման համար տրամադրվող աջակցությունը կարող է տրվել արտադրողների այն կազմակերպություններին, որոնք տվյալ ձկնորսական տարվա ընթացքում՝

ա) կիրառում են 5(1) հոդվածը՝ համապատասխան մթերքների արտադրության և շուկայահանման նկատմամբ.

բ) կիրառում են 1-ին պարբերության մեջ նշված վաճառքի գինը, թույլատրելով այս գնից 10% ցածր և 10% բարձր շեղում, մասնավորապես, հաշվի առնելու համար շուկայական գների սեզոնային տատանումները:

3. Մթերքների մասնավոր պահման համար տրամադրվող աջակցությունը տրվում է II հավելվածում թվարկված մթերքների համար, որոնք վաճառքի են հանվել, սակայն պարզվում է, որ գնորդն այդ մթերքը ձեռք չի բերել 1-ին պարբերության համաձայն սահմանված՝ Համայնքում վաճառքի գնով:

4. Հետևյալ սահմանափակումները կիրառվում են մթերքների մասնավոր պահման համար աջակցության տրամադրման նկատմամբ՝

ա) արտադրողների կազմակերպությունների անդամները Համայնքում որսացել են ձկնատեսակները, դրանցից պատրաստված մթերքները սառեցրել են նավի վրա և բեռնաթափել.

բ) մթերքները պետք է պահվեն նվազագույն ժամկետով, այնուհետև կրկին հանվեն Համայնքի շուկա.

4. մինչև արտադրողների կազմակերպությունների կողմից վաճառքի հանված համապատասխան մթերքների տարեկան քանակությունների 15%-ի առավելագույն չափով:

5. Մթերքների մասնավոր պահման համար տրամադրվող աջակցության չափը չի կարող գերազանցել տեխնիկական ծախսերի և առավելագույնը երեք ամսվա համար հաշվեգրված տոկոսագումարի հանրագումարը: Աջակցության չափը սահմանվում է յուրաքանչյուր ամիս՝ նվազման կարգով:

6. Սույն հոդվածի կիրառման, այդ թվում՝ 1-ին պարբերության մեջ նշված վաճառքի գնի սահմանման մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3

ԹՅՈՒՆՆՈՍԸ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 26

Համայնքում արտադրողի գինը

1. Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, նախքան ձկնորսական տարվա սկիզբը, III հավելվածում թվարկված մթերքներից յուրաքանչյուրի համար սահմանում է Համայնքում արտադրողի գինը: Նշված գները սահմանվում են 18(2) հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններին համապատասխան:

Գինը սահմանելիս պետք է հաշվի առնել նաև հետևյալի ապահովման անհրաժեշտությունը՝

- Համայնքի մշակող արդյունաբերության մատակարարման պայմանների դիտարկումը.
- արտադրողների եկամտի ավելացմանն օժանդակելուն նպաստելը.
- Համայնքում ավելցուկների գոյացումից խուսափելը:

Այս գները վավեր են Համայնքի ամբողջ տարածքում և սահմանվում են ձկնորսական յուրաքանչյուր տարվա համար:

2. Անդամ պետությունները, որոնք սահմանել են առևտրային առանձնահատկությունները, Հանձնաժողովին են ծանուցում իրենց մեծածախ

շուկաներում կամ նավահանգիստներում 1-ին պարբերության մեջ նշված կարգով Համայնքում արտադրված մթերքների համար գրանցված միջին գների մասին:

3. Սույն հոդվածի կիրառման, մասնավորապես, թյուննուսի տարբեր տեսակները, չափսերը և ներկայացնելու համար փոխարկման գործակից սահմանելու մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 27

Արտադրողների կազմակերպություններին տրամադրվող արտոնությունը

1. Արտադրողների կազմակերպություններին կարող է արտոնություն տրամադրվել՝ III հավելվածում թվարկված այն ձկներից ստացված մթերքների քանակությունների համար, որոնց որսն իրականացվում է այդ կազմակերպության անդամների կողմից, և որոնք վաճառվում ու առաքվում են Համայնքի մաքսային տարածքում գտնվող արդյունաբերական մշակող ճյուղեր և նախատեսված են ՀԱ 1604 ծածկագրին դասվող մթերքների արդյունաբերական արտադրության համար: Այս արտոնությունը տրամադրվում է այն դեպքում, երբ համապատասխան օրացուցային եռամսյակում.

— Համայնքի շուկայում գրանցված վաճառքի միջին գինը

— և

— 29(3)(դ) հոդվածում նշված ներմուծման գինը

1. ավելի ցածր են, քան սահմանված շեմը, որը համարժեք է համապատասխան մթերքի համար Համայնքում արտադրողի գնի 87%-ին:

Անդամ պետությունները, նախքան ձկնորսական տարվա սկիզբը, կազմում են սույն պարբերության մեջ նշված արդյունաբերության ճյուղերի ցանկը, այն թարմացնում և տրամադրում են Հանձնաժողովին:

2. Ամեն դեպքում արտոնության չափը չպետք է գերազանցի՝

— Համայնքի շուկայում համապատասխան մթերքի համար սահմանված շեմի և վաճառքի միջին գնի տարբերությունը.

— կամ այդ շեմի 12% -ին համարժեք հաստատագրված դրույքաչափով գումարի չափը:

3. Արտոնության ենթակա մթերքներից յուրաքանչյուրի առավելագույն ընդհանուր քանակը պետք է սահմանափակվի այն չափով, որը հավասար է արտոնություն տրամադրելու եռամսյակին նախորդող ձկնորսական երեք տարվա համապատասխան եռամսյակի ընթացքում 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետների համաձայն վաճառված կամ առաքված քանակությունների միջինին:

4. Արտադրողների յուրաքանչյուր կազմակերպությանը տրամադրված արտոնության չափը հավասար է՝

— 1-ին պարբերությանը համապատասխան տնօրինված համապատասխան մթերքների քանակությունների համար 2-րդ պարբերությամբ սահմանված շեմին, որը չի գերազանցում արտոնություն տրամադրելու եռամսյակին նախորդող ձկնորսական երեք տարվա համապատասխան եռամսյակի ընթացքում իր անդամների կողմից նույն պայմանների համաձայն վաճառված կամ առաքված մթերքների քանակության միջին քանակը.

— 2-րդ պարբերությամբ սահմանված շեմի 50%-ին, որը նախատեսված է այն մթերքների քանակությունների համար, որոնք գերազանցում են առաջին պարբերություն նշված քանակությունները, և որոնք հավասար են այն քանակությունների ավելցուկին, որոնք առաջանում են արտադրողների կազմակերպություններին 3-րդ պարբերության մեջ նշված քանակությունների բաշխումից:

Այս բաշխումն արտադրողների համապատասխան կազմակերպությունների միջև պետք է իրականացվի համաչափ՝ արտոնություն տրամադրելու եռամսյակին նախորդող ձկնորսական երեք տարվա համապատասխան եռամսյակում նրանց միջին արտադրության հիման վրա:

5. Արտադրողների կազմակերպությունները տրամադրված արտոնությունը բաշխում են իրենց անդամների միջև համաչափ՝ հիմնվելով 1-ին պարբերությանը համապատասխան՝ նրանց կողմից արտադրված և վաճառված ու առաքված քանակությունների հիման վրա:

6. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես, արտոնությունների տրամադրման չափերն ու պայմաններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ԲԱԺԻՆ V

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ԳԼՈՒԽ 1

ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ

Հոդված 28

1. Արդյունաբերության մշակող ճյուղերում օգտագործման համար նախատեսված հումքի՝ բավարար քանակով Համայնքի շուկա դուրսբերումն ապահովելու նպատակով որոշ մթերքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքի վճարումը պետք է, սույն Կանոնակարգի VI հավելվածին համապատասխան, ամբողջությամբ կամ մասամբ, անորոշ ժամկետով, ինքնաբերաբար հետաձգվի:
2. Առաջին պարբերության մեջ նշված մաքսատուրքերի վճարման ժամկետի հետաձգման ռեժիմով 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածներում նշված կայունացման միջոցների սահուն իրականացումը չխոչընդոտելու նպատակով մաքսատուրքերի վճարման ժամկետի հետաձգման արտոնություն տրամադրվում է այն դեպքում, երբ տվյալ մթերքները ներմուծվում են՝ պայմանով, որ 29-րդ հոդվածի համաձայն սահմանված գինը պահպանվում է:
3. Եթե, անկախ այն փաստից, որ պահպանվում է 2-րդ պարբերության մեջ նշված՝ վկայակոչման գինը, շուկայի գործունեության զգալի խաթարումներ են նկատվել, ապա Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա, պետք է կասեցնի 1-ին պարբերության մեջ նշված միջոցները:

ՎԿԱՅԱԿՈՉՄԱՆ ԳՆԵՐԸ

Հոդված 29

1. Համայնքում վավեր վկայակոչման գները կարող են, ըստ մթերքի կատեգորիայի, սահմանվել յուրաքանչյուր տարի՝ 1-ին հոդվածում նշված մթերքների համար, որոնք ենթակա են.

ա) մաքսատուրքների նվազեցման կամ դրանց վճարման ժամկետների հետաձգման ռեժիմների, եթե ՀԱԿ-ի շրջանակներում դրանց համար պարտադիր կանոններով նախատեսվում են վկայակոչման գնի հետ համապատասխանությունը.

բ) 28(1) հոդվածում նշված միջոցներից մեկին

կամ

գ) (ա) կամ (բ) կետերում նշված ռեժիմներից բացի այլ ռեժիմների, որոնցով վկայակոչման գնի հետ համապատասխանություն է նախատեսվում, և որոնք համահունչ են Համայնքի միջազգային պարտավորություններին:

2. Եթե 1-ին պարբերության մեջ նշված միջոցներից մեկի համաձայն՝ երրորդ երկրից ներմուծված համապատասխան մթերքի համար սահմանված մաքսային արժեքն ավելի ցածր է, քան վկայակոչման գինը, ապա համապատասխան քանակությունների նկատմամբ չեն կիրառվում համապատասխան մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման ռեժիմները:

Անդամ պետություններն անմիջապես Հանձնաժողովին տեղեկացնում են այն դեպքերի մասին, երբ կիրառվում է սույն պարբերության մեջ նշված միջոցը:

3. Վկայակոչման գները, որոնք ընդունվել են.

ա) I հավելվածի «Ա» և «Բ» մասերում թվարկված մթերքների համար, հավասարեցված են 20(1) հոդվածին համապատասխան սահմանված՝ շուկայից դուրսբերման գնին.

բ) I հավելվածի «Գ» մասով նախատեսված մթերքների համար, հավասարեցված են 22-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ Համայնքում վաճառքի գնին.

գ) II հավելվածով նախատեսված մթերքների համար, հավասարեցված են 25(1) հոդվածին համապատասխան սահմանված՝ Համայնքում վաճառքի գնին.

դ) այլ մթերքների համար, պետք է սահմանվի, մասնավորապես, հիմք ընդունելով վկայակոչման գինը սահմանելու ամսաթվին անմիջապես նախորդող երեք տարիների ընթացքում անդամ պետություններում ներմուծման շուկաներում կամ ներմուծման նավահանգիստներում գրանցված մաքսային արժեքների կշռված միջինը՝ հաշվի առնելով այն անհրաժեշտությունը, որ գները պետք է արտացոլեն շուկայում տիրող իրավիճակը:

4. Անդամ պետությունները պարբերաբար ծանուցում են Հանձնաժողովին I–IV հավելվածներում նշված մթերքների՝ դրանց շուկաներում կամ նավահանգիստներում ներմուծման գների ու քանակությունների մասին: Նշված գները հավասարեցված են համապատասխան մթերքների մաքսային արժեքներին:

5. Սույն հոդվածի կիրառման՝ ներառյալ վկայակոչման գների սահմանման մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 30

1. Եթե ներմուծման կամ արտահանման պատճառով առաջացած լուրջ խաթարումներն ազդում կամ սպառնում են ազդել Համայնքի՝ 1–ին հոդվածում թվարկված մեկ կամ ավելի մթերքների շուկայի վրա, որոնք հավանաբար վտանգում են Պայմանագրի 33–րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը, ապա, մինչև այդ խաթարումը կամ խաթարման վտանգը վերացնելը, երրորդ երկրների հետ առևտրում կարող են համապատասխան միջոցներ կիրառվել:

2. 1–ին պարբերության մեջ նշված միջոցները կիրառվում և իրականացվում են թիվ 3285/94 (ԵՀ) կանոնակարգի 16–րդ հոդվածի ընթացակարգերին համապատասխան (14):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 31

Եթե Համայնքի՝ 1-ին հոդվածում թվարկված մեկ կամ ավելի մթերքների շուկայում գներն այնպես են բարձրանում և մատակարարման այնպիսի խնդիրներ են գրանցվում, որ վտանգվում է Պայմանագրի 33-րդ հոդվածի նպատակներից մի քանիսի իրագործումը, և եթե հավանականություն կա, որ այս վիճակը կշարունակվի, ապա Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ իրավիճակը շտկելու նպատակով:

Հոդված 32

Չնայած Պայմանագրի 36-րդ և 37-րդ հոդվածների համաձայն ընդունված՝ հակառակը նախատեսող դրույթներին՝ 1-ին հոդվածում նշված մթերքների արտադրության և առևտրի նկատմամբ կիրառվում են Համաձայնագրի 87-րդ, 88-րդ ու 89-րդ հոդվածները:

Հոդված 33

Չհակասելով Համայնքի մյուս դրույթներին՝ անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու, որ որևէ անդամ պետության դրոշի ներքո նավարկող ձկնորսական բոլոր նավերը հավասարապես օգտվեն նավահանգիստներից, առաջին փուլի շուկայահանման համար օգտագործվող հարմարանքներից, ինչպես նաև բոլոր հարակից սարքավորումներից ու տեխնիկական կայանքներից:

Հոդված 34

1. Անդամ պետություններն ու Հանձնաժողովը միմյանց են հաղորդում սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները: Այդ նպատակով դրանք պետք է ստեղծեն անհրաժեշտ հաղորդակցության և տեղեկատվության

փոխանակման համակարգեր, ապահովեն դրանց բնականոն աշխատանքն ու հոգան դրանց սպասարկման ծախսերը:

Առաջին ենթապարբերության մեջ նշված համակարգերի ծախսերի մի մասը ծածկվում է Համայնքի բյուջեից:

2. Սույն հոդվածի կիրառման՝ ներառյալ Համայնքի բյուջեից վճարվող ծախսերի սահմանման մանրամասն կանոնները, ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 35

1. Սույն Կանոնակարգով նախատեսված վճարումներից կատարված ծախսերը թիվ 1258/1999 (ԵՀ) կանոնակարգի 2(2) հոդվածի իմաստով միջամտության միջոցներից մեկն են:

2. Առաջին պարբերության մեջ նշված ծախսերի ֆինանսավորումը տրամադրվում է մթերքների պաշարների կամ պաշարների խմբի համար միայն մթերքների ցանկացած այն քանակության չափով, որոնք մթերքների համապատասխան պաշարների կամ պաշարների խմբի համար կատարված թույլատրելի որսի ընդհանուր ծավալից բաշխվել են համապատասխան անդամ պետությանը:

3. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 36

Անդամ պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար սույն Կանոնակարգի հետ համապատասխանությունը, ինչպես նաև կանխելու կամ վերջ դնելու ցանկացած խարդախություն:

Այդ նպատակով՝

— նրանք պարբերաբար ստուգումներ են անցկացնում ֆինանսական աջակցություն ստացողների մոտ.

— եթե նպատակահարմար է ընտրանքի միջոցով կոնկրետ ստուգումներ իրականացնել, ապա նրանք, ռիսկերի վերլուծության հիման վրա, ապահովում են, որ ստուգումների հաճախականությունը և կիրառված մեթոդները համապատասխանեն իրենց տարածքում ստուգման ենթակա միջոցին ու շուկայահանված կամ շուկայահանման նպատակով պահված մթերքների ծավալին:

Հոդված 37

2-7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 17-րդ, 19-21-րդ, 23-27-րդ, 29-րդ, 34-րդ և 35-րդ հոդվածներում նշված հարցերի մասով սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 38(2) հոդվածով սահմանված կառավարման ընթացակարգի համաձայն:

Հոդված 38

1. Հանձնաժողովին աջակցում է Ձկնամթերքների կառավարման կոմիտեն, այսուհետ՝ «Կոմիտե»:

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները:

1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 39

Կոմիտեն կարող է քննարկել կոմիտեի նախագահի կողմից իրեն ուղղված ցանկացած այլ հարց՝ սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետության ներկայացուցչի դիմումի համաձայն:

Հոդված 40

Սույն Կանոնակարգը կիրառվում է այնպես, որ միևնույն ժամանակ համապատասխան կերպով հաշվի առնվեն Պայմանագրի 33-րդ և 131-րդ հոդվածներում նշված նպատակները:

Հոդված 41

Հանձնաժողովը, ամենաուշը մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը, սույն Կանոնակարգի իրականացման արդյունքների վերաբերյալ գնահատման հաշվետվություն է ուղարկում Խորհուրդ և պառլամենտ:

Հոդված 42

1. Թիվ 3759/92 (ԵՏՀ), թիվ 105/76 (ԵՏՀ) և թիվ 1772/82 (ԵՏՀ) կանոնակարգերը սույնով ուժը կորցրած են ճանաչվում 2001 թվականի հունվարի 1-ից:
2. Ուժը կորցրած թիվ 3759/92 կանոնակարգին (ԵՏՀ) կատարվող հղումները մեկնաբանվում են որպես սույն Կանոնակարգին կատարվող հղումներ և պետք է կարդացվեն VIII հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 43

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Այն կիրառվում է 2001 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ 4-րդ հոդվածի, որը կիրառվում է 2002 թվականի հունվարի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԱ ծածկագիր		Ապրանքների նկարագիրը
Ա. 0302 և 0307 ապրանքային դիրքին դասվող թարմ կամ պաղեցրած մթերքներ.		
1.	0302 22 00	Տափակաձուկ (<i>Pleuronectes platessa</i>)
2.	ex030229 90	Պերկես (<i>Limanda limanda</i>)
3.	0302 29 10	Մեգրիմ (<i>Lepidorhombus spp.</i>)
4.	ex030229 90	Գետային տափակաձուկ (<i>Platichthys flesus</i>)
5.	0302 31 10 և 0302 31 90	Սպիտակ թյուննոս կամ երկարապոչ թյուննոս (<i>Thunnus alalunga</i>)
6.	ex03 02 40	<i>Clupea harengus</i> տեսակի ծովատառեխ
7.	0302 50 10	<i>Gadus morhua</i> տեսակի բրածուկ
8.	0302 61 10	<i>Sardina pilchardus</i> տեսակի սարդինա
9.	0302 62 00	Ոսկեգույն ծովային պերկես (<i>Melanogrammus aeglefinus</i>)
10.	0302 63 00	Սայրա (<i>Pollachius virens</i>)
11.	ex03 02 64	<i>Scomber scombrus</i> և <i>Scomber japonicus</i> տեսակների Թյունիկ
12.	0302 65 20 և 0302 65 50	Ծովաշուն (<i>Squalus acanthias</i> և <i>Scyliorhinus spp.</i>)
13.	0302 69 31 և 0302 69 33	Ոսկեգույն ծովային պերկես (<i>Sebastes spp.</i>)

14.	0302 69 41	Մերլանգ (<i>Merlangius merlangus</i>)
15.	0302 69 45	Ծովային գայլաձուկ (<i>Molva</i> spp.)
16.	0302 69 55	Անչոուս (<i>Engraulis</i> spp.)
17.	ex030269 68	<i>Merluccius merluccius</i> տեսակների խել
18.	0302 69 81	Եվրոպական կարթաձուկ (<i>Lophius</i> spp.)
19.	ex030741 10	Սիպե (<i>Sepia officinalis</i> և <i>Rossia macrosoma</i>)
Բ. Կենդանի, թարմ կամ պաղեցրած մթերքներ կամ մթերքներ՝ շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ խաշած.		
	ex03062310 ex03062331 ex0306233 9	<i>Crangon crangon</i> տեսակի ծովախեցգետիններ և հյուսիսային մանր ծովախեցգետին (<i>Pandalus borealis</i>)
Գ. Կենդանի, թարմ կամ պաղեցրած մթերքներ կամ մթերքներ՝ շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ խաշած.		
	0302 23 00	Տափակաձուկ (<i>Solea</i> spp.)
	0306 24 30	Ուտելի ծովախեցգետին (<i>Cancer pagurus</i>)
	0306 29 30	Նորվեգական օմար (<i>Nephrops norvegicus</i>)

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱ ծածկագիր		Ապրանքների նկարագիրը
Ա. 0303 և 0304 ապրանքային դիրքին դասվող՝ սառեցրած մթերքներ		
	0303 31 10	Փոքր սիպե կամ գրենլանդական վահանաձուկ (<i>Reinhardtius hippoglossoides</i>)
	0303 78 11 0303 78 12 0303 78 13 0303 78 19 և 0304 20 55 0304 20 56 0304 20 58	Խեղ <i>Merluccius</i>
	0303 79 71	Ծովային ծածան (<i>Dentex dentex</i> և <i>Pagellus</i> spp.)
	03037987 03042087 03046065	Թրածուկ (<i>Xiphias Gladius</i>)
Բ. Թիվ 0306 ապրանքային դիրքին դասվող՝ սառեցրած մթերքներ.		
	03061340 03061350 ex03061380	<i>Penaeidae</i> ընտանիքի ծովախեցգետիններ

Գ. 0307 ապրանքային դիրքին դասվող՝ սառեցրած մթերքներ.

1.	03074918 03074901	<i>Sepia officinalis</i> , <i>Rossia macrosoma</i> և <i>Sepiola rondeletti</i> տեսակների սիպե
2.	0307 49 31 0307 49 33 0307 49 35 and 0307 49 38	Կաղամար (<i>Loligo</i> spp.)
3.	0307 49 51	Կաղամար (<i>Ommastrephes sagittatus</i>)
4.	0307 59 10	Ութոտնուկ (<i>Octopus</i> spp.)
5.	0307 99 11	<i>Illex</i> spp.

ՀԱՎԵԼՎԱԾ III

Ապրանքների նկարագիրը	ՀԱ ծածկագիր	
	Թարմ պաղեցրած	կամ Սառեցրած
Ներկայացված է այլ ձևով, քան թվարկված է 0304 ապրանքային դիրքի ներքո		
I. Հետևյալ տեսակները՝		
ա) Սպիտակ թյուննոս կամ երկարապոչ թյուննոս (<i>Thunnus alalunga</i>)՝ բացի թարմից կամ պաղեցրածից		
Յուրաքանչյուրը կշռում է ավելի քան 10 կիլոգրամ (1)		0303 41 11, 0303 41 13 և 0303 41 19
Յուրաքանչյուրը 10 կիլոգրամից ավելի չի կշռում (1)		0303 41 11, 0303 41 13 և 0303 41 19
բ) Դեղնապոչ թյուննոս (<i>Thunnus albacares</i>)՝		
1. Յուրաքանչյուրը կշռում է ավելի քան 10 կիլոգրամ	0302 32 10 (1)	0303 42 12, 0303 42 32 և 0303 42 52
2. Յուրաքանչյուրը 10 կիլոգրամից ավելի չի կշռում	0302 32 10 (1)	0303 42 18, 0303 42 38 և 0303 42 58
գ) Թռչող թյուննոս կամ շերտագծավոր թյուննոս (<i>Katsuwonus pelamis</i>)	0302 33 10	0303 43 11, 0303 43 13 և 0303 43 19
դ) Կապտապոչ թյուննոս (<i>Thunnus thynnus</i>)՝ բացի թարմից կամ պաղեցրածից		0303 49 21, 0303 49 23 և 0303 49 29

ե) <i>Thunnus</i> և <i>Euthynnus</i> խմբի այլ տեսակներ	03023919 03026921	0303 49 41, 0303 49 43, 0303 49 49, 0303 79 21, 0303 79 23 և 0303 79 29
II. Ներկայացված են հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝		
ա) Ամբողջական		
բ) Խռիկները և փորոտիքը մաքրած		
գ) Այլ (օրինակ՝ «գլխատած»)		
1) Հղումը կշռին կիրառվում է ամբողջական մթերքի նկատմամբ:		

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Հետևյալ տեսակների թարմ կամ պաղեցրած մթերքներ		ՀԱ ծածկագիր
1.	Եվրոպական կամրալա	ex030229 90
2.	Երկնագույն թյուննոս (<i>Thunnus thynnus</i>)	03023911 և 03023991
3.	Մինտայ (<i>Pollachius pollachius</i>)	ex030269 51
4.	Ատլանտյան ծովային բրամ (<i>Brama spp.</i>)	0302 69 75
5.	Կապույտ մերլանգ (<i>Micromesistius poutassou</i> կամ <i>Gadus poutassou</i>)	0302 69 85
6.	Ֆրանսիական ձողաձկնիկ (<i>Trisopterus luscus</i>) և սովորական կապելան (<i>Trisopterus minutus</i>)	ex030269 99
7.	Բոպս (<i>Boops boops</i>)	ex030269 99
8.	Սովորական սմարիդա (<i>Spicara smaris</i>)	ex030269 99
9.	Ծովային օձաձուկ (<i>Conger conger</i>)	ex030269 99
10.	Տրիգլա (<i>Trigla spp.</i>)	ex030269 99
11.	Հյուսիսային խաղաղօվկիանոսյան ստավրիդ (<i>Trachurus spp.</i>)	ex03026991 ex03026999
12.	Երկայնաձուկ (<i>Mugil spp.</i>)	ex030269 99
13.	Սկատ (<i>Raja spp.</i>)	ex03026999 և

		ex03041098
14.	Թրածուկ (<i>Lepidopus caudatus</i> և <i>Aphanopus carbo</i>)	ex030269 99
15.	Խոշոր կատար (<i>Pecten maximums</i>)	ex030721 00
16.	Շեփորակիր (<i>Buccinum undatum</i>)	ex030791 00
17.	Գծավոր կամ կարմիր երկայնածուկ (<i>Mullus surmuletus, Mullus barbatus</i>)	ex030269 99
18.	Սևծովյան կարաս (<i>Spondylisoma cantharus</i>)	ex030269 99
19.	Շարոտ (<i>Sprattus sprattus</i>)	ex030261 80
20.	Կորիֆենա (<i>Coryphaena hippurus</i>)	ex030269 99

ՀԱՎԵԼՎԱԾ V

Կենդանի, թարմ կամ պաղեցրած մթերքներ

ՀԱ ծածկագիր	Նկարագիրը
03019300 03026911	Գետածածան (<i>Cyprinus Carpio</i> , <i>Ctenopharyngodon idella</i> , <i>Hypophthalmichthyes nobilis</i> , <i>Hypophthalmichthyer molitrix</i>)
ex03019911 ex03019911	Ատլանտյան սաղմոն (<i>Salmo salara</i>)
ex030191 ex030211	Իշխան (<i>Oncorhynchus mykiss</i> , <i>Salmo trutta</i>)
03019200 03026600	Օձաձուկ (<i>Anguilla anguilla</i>)
ex03019990 03026995	Ոսկեգոծ սպար (<i>Sparus aurata</i>)
ex03019990 03026994	Ծովային պերկես (<i>Dicentrarchus labrax</i>)
ex03019990 ex03026999	Տյուրբոն (<i>Psetta maxima</i>)
03071010 ex03071090	Ոստրե (<i>Ostrea edulis</i> , <i>Crassostrea gigas</i>)
ex030731 10	Միդիաներ (<i>Mytilus spp.</i>)
0307 91 00	Կակղամորթներ (<i>Ruditapes decussatus</i> , <i>Ruditapes philippinarum</i> ,

	<i>Tapes</i> spp., <i>Veneridae</i> , <i>Mercenaria mercenaria</i>)
--	--

ՀԱՎԵԼՎԱԾ VI

28-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր մաքսատուրքերի վճարման ժամկետի հետաձգումը

1. Արդյունաբերության մեջ օգտագործման նպատակով ՀԱ ex030420 85 ապրանքային ծածկագրին դասվող՝ խորանարդների տեսքով և մշակման համար նախատեսված Ալյասկայի մինտայ ձկնատեսակի (*Theragra chalcogramma*) սառեցրած սուկիի համար գանձվող մաքսատուրքի վճարման ժամկետը հետաձգվում է անորոշ ժամկետով:
2. Արդյունաբերության մեջ օգտագործման նպատակով ՀԱ ex030490 61 ապրանքային ծածկագրին դասվող՝ խորանարդների տեսքով և մշակման համար նախատեսված Ալյասկայի մինտայ ձկնատեսակի (*Theragra chalcogramma*) սառեցրած մսի համար գանձվող մաքսատուրքի վճարման ժամկետը հետաձգվում է անորոշ ժամկետով:
3. Հետևյալ ՀԱ ապրանքային ծածկագրերին դասվող՝ թարմ, պաղեցրած ու սառեցրած և մշակման համար նախատեսված *ապրանքային ձկնատեսակի ձողաձուլ, գրենլանդական ձողաձկնիկ, խաղաղօվկիանոսյան ձողաձուլ և սայկա* տեսակի ձկների համար գանձվող մաքսատուրքը՝ բացառությամբ լյարդի և ձկնկիթի,

ex030250 10

ex030250 90

ex030269 35

ex030360 11

ex030360 19

ex030360 90

ex030379 41

նվազեցվում է անորոշ ժամկետով՝ հասցնելով 3%-ի:

4. ՀԱ ex030490 05 ապրանքային ծածկագրերին դասվող և մշակման համար նախատեսված սուրիմիի համար գանձվող մաքսատուրքի դրույքաչափը նվազեցվում է անորոշ ժամկետով՝ հասցնելով 3,5%-ի:

5. ՀԱ ex030420 91 ապրանքային ծածկագրին դասվող և մշակման համար նախատեսված նոր զելանդական մակրուրուսի (*Macruronus novaezealandiae*) սառեցրած սուկիի համար գանձվող մաքսատուրքի դրույքաչափը նվազեցվում է անորոշ ժամկետով՝ հասցնելով 3,5%-ի:
6. ՀԱ ex030490 97 ապրանքային ծածկագրին դասվող և մշակման համար նախատեսված նոր զելանդական մակրուրուսի (*Macruronus novaezealandiae*) սառեցրած մսի համար գանձվող մաքսատուրքի դրույքաչափը նվազեցվում է անորոշ ժամկետով՝ հասցնելով 3,5%-ի:
7. Հետևյալ ՀԱ ապրանքային ծածկագրերին դասվող՝ մասնատված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած և մշակման համար նախատեսված հյուսիսային մանր ծովախեցգետինների համար գանձվող մաքսատուրքի դրույքաչափի գանձումը՝

ex030613 10

ex030623 10

հետաձգվել է անորոշ ժամկետով:

Նշված մթերքների փաստացի մշակված լինելու փաստը պարզելու համար անցկացվող ստուգումներն իրականացվում են Համայնքի համապատասխան դրույթներին համապատասխան: Նշված մթերքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքի վճարման ժամկետի ամբողջությամբ կամ մասամբ հետաձգումը պետք է թույլատրվի այն դեպքում, երբ դրանք պետք է ենթարկվեն որևէ գործողության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պետք է ենթարկվեն հետևյալ գործողություններից միայն մեկին կամ մի քանիսին՝

— մաքրումը, փորոտիքի հեռացումը, պոչատումը, գլխատումը.

— կտրատումը (բացառությամբ խորանարդների բաժանման, ֆիլեի անջատման, սառեցված խորանարդների կտրատման կամ շերտատված ֆիլեի խորանարդների հանման).

— նմուշառումը, սորտավորումը.

— պիտակավորումը.

— փաթեթավորումը.

— պաղեցումը.

— սառեցումը.

— խորը սառեցումը.

— հալեցումը, առանձնացումը:

Չի թույլատրվում հետաձգել այն մթերքների համար գանձվող մաքսատուրքի վճարման ժամկետը, որոնք, ի լրումն նշված գործողությունների, պետք է ենթարկվեն մշակման (կամ գործողությունների), որի դեպքում կիրառվում է մաքսատուրքի վճարման ժամկետների հետաձգում, եթե նման մշակումը (կամ գործողությունները) իրականացվում է (են) մանրածախ առևտրի կամ սպասարկման մակարդակում: Մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգումը կիրառվում է միայն մարդու կողմից սպառման համար նախատեսված ձկան նկատմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ VII

Ա. 10(2)(ա) հոդվածով նախատեսված փոխհատուցման չափը հաշվարկելու մեթոդը

(Եվրոյով՝ կազմակերպության անդամի նավի հաշվով)		
Կազմակերպության անդամների նավերը	Առաջին երեք տարիների ընթացքում տարեկան գումարը	Հետագա երկու տարիների ընթացքում տարեկան գումարը
1-50-րդ	600	300
51-100-րդ	200	100
101-500-րդ	100	50
501-րդից	0	0

Բ. 10(2)(բ) հոդվածով նախատեսված փոխհատուցման չափը հաշվարկելու մեթոդը

(Եվրոյով՝ արտադրողների կազմակերպության հաշվով)		
Կոնկրետ արտադրական տարածքում արտադրողների կազմակերպության կողմից իրացված արտադրության տոկոսը	Առաջին երեք տարիների ընթացքում տարեկան գումարը	Հետագա երկու տարիների ընթացքում տարեկան գումարը
մինչև և ներառյալ 50%-ը	20 000	15 000
50% և 75%-ի միջև	25 000	20 000
ավելին և ներառյալ 75%-ը	30 000	25 000

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

Համեմատական աղյուսակը

Թիվ 3759/92 կանոնակարգ (ԵՏՀ)	Սույն Կանոնակարգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	Հոդված 2
Հոդված 3	Հոդված 3
Հոդված 4	Հոդված 5
Հոդված 4ա	Հոդված 6
Հոդված 5	Հոդված 7
Հոդված 5ա	—
Հոդված 6	Հոդված 8
Հոդված 7	—
Հոդված 7ա	Հոդված 12
Հոդված 7բ	—
Հոդված 8	Հոդված 17
Հոդված 9	Հոդված 18
Հոդված 10	Հոդված 19
Հոդված 11	Հոդված 20
Հոդված 12	Հոդված 21
Հոդված 12ա	—

Հողված 13	Հողված 22
Հողված 14	Հողված 23
Հողված 15	Հողված 24
Հողված 16	Հողված 25
Հողված 17	Հողված 26
Հողված 18	Հողված 27
Հողված 19	—
Հողված 20	—
Հողված 21	—
Հողված 22	Հողված 29
Հողված 23	Հողված 29
Հողված 24	Հողված 30
Հողված 25	Հողված 35
Հողված 26	Հողված 33
Հողված 27	Հողված 32
Հողված 28	Հողված 31
Հողված 29	—
Հողված 30	Հողված 34
Հողված 31	Հողված 37
Հողված 32	Հողված 38

Հողված 33	Հողված 39
Հողված 34	Հողված 40
Հողված 35	Հողված 42
Հողված 36	Հողված 43
Հավելված I	Հավելված I
Հավելված II	Հավելված II
Հավելված III	Հավելված III
Հավելված IV	—
Հավելված V	—
Հավելված VI	Հավելված IV
Հավելված VII	Հավելված VI

(1) ՊՏ C 78, 20.03.1999թ., էջ 1:

(2) 1999 թվականի դեկտեմբերի 2-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

(3) ՊՏ C 329, 17.11.1999թ., էջ 13:

(4) ՊՏ C 374, 23.12.1999թ., էջ 71:

(5) ՊՏ L 388, 31.12.1992թ., էջ 1: Թիվ 3318/94 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 350, 31.12.1994թ., էջ 15):

(6) ՊՏ L 20, 28.01.1976թ., էջ 39: Հանձնաժողովի թիվ 3940/87 (ԵՏՀ) կանոնակարգով փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 373, 31.12.1987թ., էջ 6):

(7) ՊՏ L 197, 06.07.1982թ., էջ 1:

(8) ՊՏ L 337, 30.12.1999թ., էջ 10:

(9) Գյուղատնտեսական մթերքների արտադրության և առևտրի նկատմամբ մրցակցության որոշ կանոնները կիրառող՝ թիվ 26 կանոնակարգ (ՊՏ 30, 20.04.1962թ., էջ993/62): Թիվ 49 կանոնակարգով փոփոխված կանոնակարգ (ՊՏ 53, 01.07.1962թ., էջ 1572/62):

(10) ՊՏ L 160, 26.06.1999թ., էջ 103:

(11) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

(12) «Վերջնական սպառողին վաճառելու համար նախատեսված սննդամթերքները պիտակավորելու, ներկայացնելու և գովազդի վերաբերյալ անդամ պետությունների իրավական ակտերը համապատասխանեցնելու մասին» Խորհրդի 1978 թվականի դեկտեմբերի 18–ի 79/112/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 33, 08.02.1979թ., էջ 1): Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 97/4/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 43, 14.02.1997թ., էջ 21):

(13) Ձկնամթերքների որոշ տեսակների շուկայահանման ընդհանուր չափանիշները սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի նոյեմբերի 26–ի թիվ 2406/96 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 334, 23.12.1996թ., էջ 1): Հանձնաժողովի թիվ 323/97 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 52, 22.02.1997թ., էջ 8):

(14) «Ներմուծման ընդհանուր կանոնների մասին» և թիվ 518/94 կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 22–ի թիվ 3285/94 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 349, 31.12.1994թ., էջ 53): Թիվ 2315/96 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 314, 04.12.1996թ., էջ 1):